# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 08 (1508) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 12, 2011
VOLUME 31, NO. 08 (1508) SATURDAY, MARCH 12, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՈՐՈՇԱԾ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շաբաթ, Մարտ 5-ին Սոչիի մէջ կայացաւ Ռուսաստան, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներ՝ Դիմիտրի Մեդվեդեւի, Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի հերթական հանդիպումը: Տեղի ունեցած բանակցութիւններու արդիւնքով հրապարակուեցաւ միատեղ յայտարարութիւն՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ:*

*Ընդունուած փաստաթղթին մէջ ըսուած է որ, երեք պետութիւններու ղեկավարները քննարկած են 2010 թուականի Հոկտեմբեր 27-ին Աստրախանի մէջ կայացած նախորդ հանդիպման ժամանակ ընդունուած եռակողմ յայտարարութեան գործնական իրականացման հարցերը: Մասնաւորապէս, նախագահները պայմանաւորուած են ամենակարճ ժամկէտներու մէջ աւարտել գերիներու փոխանակումը:*

*«Նախագահները շեշտեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցով իրենց կանոնաւոր շփումներու կարեւոր նշանակութիւնը եւ պայմանաւորուեցան զանոնք շարունակել նոյն ձեւաչափով՝ ի լրումն ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահներու աշխատանքին», - ըսուած է յայտարարութեան մէջ:*



**Ձախէն աջ՝ Սարգսեան, Մեդվեդեւ եւ Ալիեւ Սոչիի մէջ կայացած հանդիպման ընթացքին**

*Սոչիի այս հանդիպման նախօրէին, Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի զօրքերու շփման գիծի մօտ, ատրպէյճանցի դիպուկահարի կրակոցով զոհուած էր Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի 20-ամեայ զինծառայող Գրիգոր Շախկանեանը:*

*Դէպքի կապակցութեամբ Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Ռուսաստանի նախագահի նախաձեռնութեամբ եւ ներկայութեամբ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու Սոչիի մէջ կայանալիք հերթական հանդիպման նախաշեմին, միջազգային հանրութեան, ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի*

*Շար.ը էջ 4*

## 1915-ԻՆ ԶՈՀՈՒԱԾ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԸՆԴԳՐԿՈՒԱԾ ԵՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՑԱՆԿԻՆ ՎՐԱՅ

*Թուրքիոյ ժամանակակից Լրագրողներու Ընկերակցութիւնը, որուն գրասենեակը կը գտնուի Անգարայի մէջ, Մեծ Եղեռնի զոհ դարձած 9 հայ մտաւորականներ ընդգրկած է Թուրքիոյ մէջ սպաննուած լրագրողներու ցանկին վրայ:*

*Ընկերակցութիւնը մտադիր է Ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակի օրը, յատուկ միջոցառում կազմակերպել:*

*Ցանկին վրայ աւելցուած անուններն են՝ Ռուբէն Զարդարեան, Սիամանթօ, Երուանդ Սրմաքեշխանլեան (Երուխան), Արմէն Դորեան, Լեւոն Լարենց, Գրիգոր Զոհրապ, Ռուբէն Սեւակ, Յովհաննէս Յարութիւնեան եւ Դանիէլ Վարուժան:*

*Ժամանակակից լրագրողներու ընկերակցութեան նախագահ Ահմէտ Աբակայ «Hurriyet Daily News» թերթին տուած հարցազրոյցի մը ընթացքին ըսած է որ, Ընկերակցութիւնը ուշացումով կը*

*Շար.ը էջ 4*

## ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՑՈՒՑԱԴՐՈՒԱԾ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՆՄԱՆԱԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՂԷՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՋՈՒԻ



**Ծիծեռնակաբերդի յուշարձանին նմանող բեմայարդարում Թուրքիոյ մէջ**

*Թուրքիոյ Էրզրում քաղաքին մէջ այս տարի տեղի ունեցած Ձմեռնային 25-րդ Ուսանողական Խաղերու բացման եւ փակման արարողութիւններու ժամանակ՝ ներկայացուած է պատկեր մը, որ շատ նման է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած կոթողին: Այս մասին, ըստ թրքական «Ջիհան» գործակալութեան, յայտարարած է «Ազգայնական շարժում» կուսակցութեան Էրզրումի նահանգային գրասենեակի նախագահ Ջէքայի Քայիա:*

*Թուրք ազգայնականին հաւաստիացումով, առաջին հայեացքով յստակ կ'երեւի, որ այդ զարդարանքը շատ նման է Երեւանի մէջ տեղադրուած Ցեղասպանութեան յուշակոթողին: «Արդեօ՞ք այս հայկական նախաձեռնութեան մաս չի կազմեր: Արդեօ՞ք պատահականութիւն է: Ցոյսով եմ՝ պատահականութիւն է: Սակայն անոր հեղինակները պէտք է բացատրեն տեղի ունեցածը»,- յայտարարած է Ջէքայի Քայիա, յայտնելով, որ իրենք համապատասխան քայլեր պիտի կատարեն տեղի ունեցածին լիարժէք պարզաբանման համար:*

*Յունուար 27-Փետրուար 6 Թուրքիոյ Էրզրում քաղաքին մէջ տեղի ունեցած են Համաշխարհային Ուսանողական 25րդ ձմեռնային խաղերը, որուն մասնակցած են 58 երկիրներ ներկայացնող մօտ երեք հազար մարզիկներ:*

*Ձմեռնային խաղերու բացման արարողութեան մասնակցած են Թուրքիոյ նախագահ Ապտուլլահ Կիւլ, վարչապետ Ռեճէպ Թայիփ Էրտողան, Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մեհմետ Ալի Շահին եւ բարձրաստիճան այլ պաշտօնեաներ:*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՂԹԻ ՎՐԱՅ ԵՆ ՄԻԱՅՆ»

*Մեծն Բրիտանիոյ մէջ գործող միջազգային քաղաքականութեան ուսումնասիրութեան յայտնի կեդրոններէն՝ Foreign Policy Center-ը Հայաստանի մասին հրապարակած է զեկոյց մը, որ կու գայ հաստատելու թէ, արդ երկրէն ներս բարեփոխումները շատ դանդաղ կ'ընթանան: «Հակառակ շարք մը բնագաւառներու մէջ, շատ յաճախ թուղթի վրայ, քան իրականութեան մէջ, արձանագրուած յառաջընթացին՝ Հայաստանի մէջ բարեփոխումները շատ դանդաղ առաջ կ'երթան, ինչ որ կը խալխլէ ժողովուրդի յոյսերն ու նկրտումները», ըսուած է միջազգային ազդեցիկ կեդրոնի զեկոյցին մէջ:*

*Ուսումնասիրելով Հայաստանի ներքաղաքական կեանքի ու արտաքին քաղաքականութեան վերջին զարգացումները՝ կոռուպցիայի դէմ պայքարէն, համախոհական նոր յուշագիրէն մինչեւ հայ - թրքական հաշտեցումն ու ղարաբաղեան հարցի կարգաւորումը, մասնագէտներու հրապարակած զեկոյցը կը յայտնէ, որ հակառակ Սերժ Սարգսեանի բարեփոխումներու մասին կատարած յայտարարութիւններուն, իշխող կուսակցութեան քաղաքականութիւնը վստահութիւն չի ներշնչեր եւ մտավախութիւն գոյութիւն ունի, որ փոփոխութիւնները գլխաւորաբար ձեւական բնոյթ կը կրեն՝ գալիք ընտրութիւններէն առաջ իշխանութեան դիրքերը ամրապնդելու համար:*

*«Կը խորհիմ որ, միջազգային հանրութիւնը ակնյայտօրէն արդարացուած կասկածներ ունի Հայաստանի իշխանութիւններու կողմէ յայտարարուած բարեփոխումներու վերաբերեալ, նկատի առնելով այն, ինչ որ կատարուած է մինչ օրս», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսած է ուսումնասիրութեան ղեկավար Ատէմ Հագ՝ աւելցնելով. - «Նայեցէք, օրինակ, թէ ինչ կը կատարուի մամուլի ազատութեան ոլորտէն ներս՝ կը կրճատուի հեռատեսիլի ալիքներու թիւը, կը սահմանափակուի ընդդիմախօսներու՝ եթերի վրայ երեւնալու եւ լսելի դառնալու կարելիութիւնը, կը շարունակուին յարձակումները լրագրողներու նկատմամբ... Այս ամէնը վստահութիւն չի ներշնչեր, թէ իշխանութեան կողմէ բարեփոխումներու մասին կատարուող յայտարարութիւնները անկեղծ են»:*

*Foreign Policy Center-ի մասնագէտներու խումբի համոզմամբ, սեփական ժողովուրդի եւ միջազգային հանրութեան վստահութիւնը*

*Շար.ը էջ 2*

# ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ, ԵՒ ԽԵԼՔ ՊԷՏՔ ՉԷ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

«Ազատութիւն» ռադիոկայանին պարզաբանում տալով Փետրուարի 28-ին Երեւանի պետհամալսարանում ունեցած իր ելոյթի կապակցութեամբ, Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Եովանովիչը յիշեցրել է ՀՀԿ 20-ամեակի միջոցառման ժամանակ Սերժ Սարգսեանի ունեցած ելոյթը: ԱՄՆ դեսպանը յիշեցրել է, որ Սերժ Սարգսեանն այդ ելոյթում Հայաստանի ապագայի գրաւական էր համարել ժողովրդավարութիւնը, ակտիւ երկխօսութիւնը եւ կեանքի բոլոր ոլորտներում եւրոպական արժէքների ներդրումը: Այդպիսով, Մարի Եովանովիչը փաստացի պատասխանում է այն մեղադրանքներին, թէ ԱՄՆ Հայաստանում յեղափոխութեան կոչ է անում կամ ինչ որ յեղափոխական գործընթաց նախաձեռնում:

Իրականում իհարկէ հասկանալի են այդ բնորոշումների արմատները կամ շարժառիթները: Երբ չկայ որեւէ հակափաստարկ, լաւագոյն արձագանքը մնում է բովանդակութիւնից վեր գտնուող բնորոշումներ տալը: Մարի Եովանովիչի ելոյթի բովանդակային քննարկում կարծես այդպէս էլ չեղաւ: Մինչդեռ այդ ելոյթում չկար որեւէ մի դրոյթ, որը ոչ միայն Հայաստանի իշխանութեան խօսքին, այլ նաեւ Հայաստանի Սահմանադրութեանը կամ օրէնքներին է հակասում:

ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակեանը յայտարարում է, որ Մարի Եովանովիչը գունաւոր յեղափոխութեան կոչ չի արել, բայց ասել է բաներ, որոնք իրենց համար ինչ որ մասով ընդունելի չեն: Գալուստ Սահակեանն իհարկէ չի մանրամասնել, թէ յատկապէս ինչը ընդունելի չէր դեսպանի ելոյթում: Երեւի լրագրողները չեն հարցրել: Իսկ եթէ չեն հարցրել, էլ ինչ կարիք կայ պատասխանելու, առաւել եւս, որ պատասխանը Գալուստ Սահակեանի եւ նրա իշխանական գործընկերների համար թերեւս բաւական դժուար էր լինելու: Եթէ իշխանութիւնն այդ ելոյթին պատասխան ունենար, ապա յեղափոխութեան կոչի մասին աւանդական խորամուխումները չէին լինի: «Համաշխարհային դաւադրութեան» տեսութիւնն առաջ է քաշւում այն ժամանակ, երբ որեւէ ասուածի դէմ չկայ հիմնաւոր եւ բովանդակային հակափաստարկ:

Այդ դէպքում սկսում են մեղադրանքները պատուէր կատարելու, գործակալ լինելու, թշնամու ջրաղացին ջուր լցնելու եւ այլ համանման «դաւաճանութիւնների» մասին: Ընդ որում, վատը թերեւս այն է, որ այդ մեթոդոլոգիան այնքան լայն կիրառում է գտել Հայաստանում, որ շատերն արդէն դրան հաւատում են անկեղծօրէն, ամբողջ հոգով եւ մտքով, չի բացառւում նաեւ սրտով: Թէեւ դա գուցէ նաեւ նրանից է, որ «համաշխարհային դաւադրութեանը» հաւատալը բաւական հեշտ է, ձերբազատում է աւելորդ պատասխանատուութիւնից. ամէն ինչ վերագրում ես այդ դաւադրութեանը եւ վերջ, այլեւս մտածել պէտք չէ, քննարկել պէտք չէ, խնդիրները հասկանալ պէտք չէ, սեփական պատասխանատուութեան շրջանակ կազմելն ու իրացնել պէտք չէ: Այդ շրջանակը սկսում է սահմանափակուել ընդամէնը նրանով, թէ դու որքան արագ ես կարողանում տեղի ունեցող երեւոյթների մէջ բացայայտել «համաշխարհային դաւադրութեան» հետքը:

Դժուար է պատկերացնել պետականութեան զարգացման, մտքի եւ ինտելեկտի իրական գերակայութեան առաւել մեծ արգելակ: Միտքը սկսում է չափուել «համաշխարհային դաւադրութեան» տեսութեան հանդէպ հաւատով, իսկ ինտելեկտի չափը դառնում է հնարաւորինս շատ երեւոյթներ այդ «դաւադրութեան» շրջանակում տեսնելու կարողութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՂԹԻ ՎՐԱՅ ԵՆ ՄԻԱՅՆ»

Շարունակուած էջ 1-էն

վերագտնելու համար պաշտօնական Երեւանը պէտք է առաջին հերթին էական փոփոխութիւններ իրականացնէ երեք առանցքային ոլորտներու մէջ՝ արդարադատութեան համակարգ, խօսքի ազատութիւն եւ ժողովրդավարութեան զարգացում:

«Համախոհական կառավարութեան անդամ կուսակցութիւններու ստորագրած վերջին յուշագրի արդիւնքով խորհրդարանի միակ ակնյայտ ընդդիմադիր կուսակցութիւնը՝ «Ժառանգութիւն»-ը, պոյքոթեց ու լքեց նիստերու դահլիճը: Այս առողջ զարգացում չէ Հայաստանի ժողովրդավարացման համար եւ եթէ Նախագահ Սերժ Սարգսեան իսկապէս անկեղծ է եւրոպական չափանիշներուն հաւատարիմ ըլլալու՝ իր հաւաստիացումներուն մէջ, ապա պէտք է ճանապարհ գտնէ, ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան հետ երկխօսութիւն սկսելու համար», - շեշտած է բրիտանական հեղինակաւոր խումբի ներկայացուցիչ, «Հայաստանը՝ լուսարձակի տակ» ուսումնասիրութեան ղեկավար Ատէմ Հագ:

«Եւրամիութիւնը պէտք է առաւել բարձր եւ հրապարակային խօսի բարեփոխումներուն աջակցելու իր պատրաստակամութեան մասին եւ գանոնք դարձնէ գերակայ պայման, Հայաստանի իշխանութիւններուն առեւտուրի կամ վիզաներու արտօնութիւններ առաջարկելու ժամանակ: Կրնայ ըլլալ որ կառոյցը շատ կարեւոր քայլեր կը կատարէ վարագոյրներու ետեւ, սակայն անհրաժեշտ է, որ այդ մասին իմանայ նաեւ հասարակութիւնը», - ըսած է Ատէմ Հագ ու շեշտած,- «Անհրաժեշտ է, որ ողջ միջազգային համայնքի՝ Եւրամիութեան, Եւրախորհուրդի, ԵԱՀԿ-ի ու Միացեալ Նահանգներու արձագանքը Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու եւ ժողովրդավարութեան ոտնահարումներուն կապակցութեամբ ըլլան խիստ, բայց արդարամիտ»:

massisweekly.com
updated every Friday

# ՍՏԱՀԱԿՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Այն, որ իշխանութիւններն իսկապէս խուճապի մէջ են եւ ժամ առ ժամ կորցնում են առողջ բանականութիւնը, երեւում է ոչ միայն ոստիկանութեան հիստերիկ պահուածքից: Իշխանական վերնախաւում տիրող խուճապի անուղղակի ապացոյցներից մէկն էլ այն է, որ վերջին օրերին նրանք սկսել են աւելի ու աւելի յաճախ խօսել հայրենասիրութիւնից (յայտնի է, չէ՞, թէ ում վերջին հանգրուանն է հայրենասիրութիւնը):

Բանն այնտեղ է հասել, որ իշխանական պատգամաւորներից մէկը յայտարարել է, թէ բա չէք ասի՝ Հայ Ազգային Կոնգրէսի առաջ քաշած 15 պահանջները մշակուել են «գունաւոր յեղափոխութիւնների կենտրոններում», որովհետեւ դրանում նշուած գումարները ներկայացուած են ոչ թէ հայկական դրամով, այլ ամերիկեան դոլարով: Առանձին վերցրած մէկ մարդու տխմարութիւնն ինքնին դատապարտելի երեւոյթ չէ եւ նոյնիսկ կարեկցանքի է արժանի, եւ հաւատացէք՝ չարժէ այդ մարդուն բացատրել, որ նուազագոյն աշխատավարձի կամ կենսաթոշակի չափը դոլարի փոխարժէքով պայմանաւորելու նպատակն ընդամէնը հիպերինֆլյացիայի բացասական հետեւանքներից խուսափելն է: Այդ պատգամաւորի ասածին անդրադառնում ենք՝ ընդամէնը ցոյց տալու համար, թէ ո՞ւր են հասել իշխանութիւնները, որ այլ փաստարկներ չգտնելով՝ դա են մատնանշում: Ընդ որում, «գունաւոր յեղափոխութիւնների կենտրոնների» դէմ կատաղի պայքարի դրսեւորումները սրանով չեն աւարտւում:

Մի քանի օր առաջ, օրինակ, Հայաստանում ԱՄՆ դեսպանը ելոյթ էր ունեցել ԵՊՀ-ում եւ կարեւորել Հայաստանում քաղաքացիական հասարակութեան ձեւաւորումը: Եւ ի՞նչ. իշխանական ողջ քարոզչամեքենան միանգամից աղմուկ բարձրացրեց, թէ «հարայ, հասէք, ԱՄՆ-ը առանձնակի դաժանութեամբ միջամտում է մեր ներքին գործերին»: Հայ ազգային մտքի ընդվզման լեյտմոտիվը նոյնն էր. «մենք երեքհազարամեայ քաղաքակրթութիւն ունենք, դուք ո՞վ էք, որ մեզ խելք սովորեցնէք»:

Արդարացի են դեսպանին ուղղուած մեղադրանքները, թէ ոչ՝ դեռ մի կողմ թողնենք եւ դրա փոխարէն անդրադառնանք իշխանական քարոզչամեքենայի հովհարային հայրենասիրութեանը: Երբ մի քանի տարի առաջ Ռուսաստանի բարձրաստիճան պաշտօնեաներից մէկը Հայաստանն անուանեց «ֆորպոստ», իշխանական քարոզչամեքենան ծպտուն չհանեց: Մինչդեռ այդ գնահատականն ուղղակի ոտնահարում էր ՀՀ Սահմանադրութիւնը (այնտեղ գրուած է, որ Հայաստանն ինքնիշխան պետութիւն է, իսկ ֆորպոստ լինելու մասին ոչ մի բառ չկայ): Երբ Սերժ Սարգսեանը Ռուսաստանի նախագահին շնորհակալութիւն էր յայտնում ընտրութիւններում իրեն աջակցելու համար, դարձեալ ծպտուն չլսուեց (թէեւ ՀՀ նախագահի ընտրութիւններին դրսից միջամտելը նոյնպէս հակասահմանադրական է): Իսկ երբ ամերիկեան դեսպանը ուղղակի մէջբերումներ է անում Սերժ Սարգսեանի ելոյթից եւ մատնանշում ՀՀ Սահմանադրութեան յօդուածները, միանգամից հիստերիա է սկսւում: Ինչո՞ւ:

Բայց վերադառնանք Հայաստանի ներքաղաքական իրավիճակին: Տարբերակներն այստեղ շատ չեն: Եթէ Հայաստանն ազատ, անկախ, ինքնիշխան երկիր է, ուրեմն որեւէ այլ երկիր իրաւունք չունի միջամտել մեր ներքին գործերին: Այդ դէպքում ամերիկեան դեսպանի ելոյթն իսկապէս կարելի է գնահատել որպէս մեր ներքին գործերին միջամտելու փորձ, բայց միւս կողմից էլ՝ այդ դէպքում մեր երկրում իշխանութիւնը պիտի պատկանի ժողովրդին, եւ ժողովուրդը պիտի իրաւունք ունենայ ազատ-արդար ընտրութիւնների միջոցով իշխանութիւն ձեւաւորել: Իսկ եթէ Հայաստանն ազատ, անկախ եւ ինքնիշխան պետութիւն չէ, այլ ֆորպոստ, այդ դէպքում բոլոր գերտէրութիւնները պիտի հնարաւորութիւն ունենան «արդար մրցակցութեան մէջ» պայքարել ֆորպոստատիրոջ կարգավիճակի համար, եւ հասկանալի չէ, թէ ինչու են իշխանութիւնները նախապատուութիւնը տալիս «գնորդներից» մէկին:

Այսպէս թէ այնպէս՝ ընդդիմութիւնն ակնյայտօրէն Հայաստանի ինքնիշխանութեան «տարբերակի» կողմնակիցն է եւ առաջ է քաշում միայն այնպիսի պահանջներ, որոնք ամրագրուած են ՀՀ Սահմանադրութեամբ: Իշխանութիւնները, հակառակը, շատ էլ լուրջ չեն ընդունում այդ փաստաթուղթը եւ շարունակ յիշեցնում են «սրած կացնի» մասին:

Բայց բոլորն էլ գիտեն, թէ ինչով է աւարտւում առակը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԾԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ



*«Ժառանգութեան» պատգամաւոր Արմէն Մարտիրոսեան կը վիճի ոստիկաններուն հետ*

*Ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորները պատրաստել են հաղորդում յանցագործութեան մասին, որը կը ներկայացնեն Յատուկ քննչական ծառայութիւն (ՀՔԾ):*

*Պատգամաւորները պահանջում են քրէական գործ յարուցել Մարտի 3-ին Հանրապետութեան հրապարակում տեղի ունեցած միջադէպի կապակցութեամբ:*

*Այդ օրը, մի քանի տասնեակ քաղաքացիներ բողոքի ակցիա էին կազմակերպել, որի ընթացքում քաշքշուք էր տեղի ունեցել նրանց միացած խորհրդարանական «Ժառանգութիւն» ընդդիմադիր խմբակցութեան պատգամաւորների եւ ոստիկանների միջեւ:*

*«Ժառանգութիւն»-ը յանցագործութեան մասին հաղորդման կրկնօրինակներ է հասցէագրում նաեւ մի շարք պաշտօնեաների ու միջազգային կազմակերպութիւնների:*

*«Իհարկէ, օրինակներ կը գնան նաեւ այլ անձանց, այլ պաշտօնեաների: Բացի այդ, մենք այս մասին նաեւ կը տեղեկացնենք համապատասխան իրաւապաշտպան միջազգային կառոյցներին», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան անդամ Զարուհի Փոստանջեանը:*

# ՀԱԿ-Ի 15 ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՉԵՆ ՔՆՆԱՐԿՈՒԵԼ ՀՀԿ ՆԻՍՏՈՒՄ

*Հանրապետական կուսակցութեան կենտրոնական գրասենեակում ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսեանի հետ հանդիպման ժամանակ չի քննարկուել ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրէսի (ՀԱԿ) վերջին՝ 15-կէտանոց յայտարարութիւնը, քանի որ, ըստ հանրապետական Գալուստ Սահակեանի, իրենց համար «պահանջներ ներկայացնելն ընդունելի չէ»:*

*ՀԱԿ-ը մի շարք պահանջների թւում Մարտի 1-ին Երեւանում տեղի ունեցած հանրահաւաքի ժամանակ պահանջե լ էր նաեւ վարչապետ Տիգրան Սարգսեանին եւ մի քանի այլ բարձրաստիճան պաշտօնեաներին հեռացնել զբաղեցրած պաշտօններից՝ «տնտեսութեան կառավարման եւ օրինականութեան ապահովման բնագաւառներում ցուցաբերած խայտառակ թերացումների, կամայականութիւնների կամ պարզապէս մասնագիտական ապաշնորհութեան համար»*

*«Մենք ունենք բողոքող քաղաքացիներ, եւ նրանց բողոքները մեզ համար ընդունելի են, իսկ ինչ վերաբերում է 15 կէտերին, դրանք կամ արտագրուած կէտեր են կամ արտագրուած գաղափարներ», - Ազգային Ժողովում յայտարարեց Հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը:*

# «ՈՉ ԹԷ ՎԵՐՋՆԱԳԻՐ, ԱՅԼ ՄԵԾ ԵՂԲՕՐ ԽՈՐՀՈՒՐԴ»

*Իշխանութիւնները ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ներկայացրած 15 կէտից բաղկացած պահանջագիրը պէտք է ընկալեն ոչ թէ իբրեւ վերջնագիր, այլ մեծ եղբօր խորհուրդ. կարծում է «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանը:*

*«Ա1+»-ի հետ զրոյցում նա նաեւ նշեց, որ Մարտի 1-ի հանրահաւաքից յետոյ ուշադիր հետեւել է թէ իշխանական, թէ հասարակական թեւերում պահանջագրի հետ կապուած արձագանքներին. «Հետաքրքիրն այն է, որ ոեւէ մէկը առաջարկուած կէտերը չի մերժում, ոեւէ մէկը չի ասում, թէ ճանապարհները չեն փակուել հանրահաւաքի նախօրէին, որ չունենք քաղբանտարկեալներ եւ այլն: Իշխանութիւններն ուղղակի ասում են, որ մեզ հետ ուլտիմատումների լեզուով մի խօսէք. դա ոչ թէ ուլտիմատում է, այլ իրավիճակից դուրս գալու ելք»:*

*Նրա կարծիքով՝ եթէ 2008թ. Մարտի 1-ից 3 տարի անց հանրահաւաքին դարձեալ մասնակցում է այդքան մեծ թուով մարդ, դա մի բանի մասին է միայն վկայում. «Այստեղ ֆենոմէնը քաղաքական գործիչների անհատականութեան մէջ չէ, չնայած դա էլ իր տեղն ունի, այլ առաջացած խնդիրների մէջ է: Իշխանութիւնները կը փորձե՞ն հասկանալ՝ որն է պատճառը, որ այդքան մարդ հաւաքւում է»:*

*Արամ Սարգսեանը վստահ է, որ եթէ երկրում առաջացած խնդիրները չլուծուեն, ապա Հայաստանում տեղի կ'ունենայ այն, ինչ տեղի տեղի ունեցաւ արաբական երկրներում. «Իսկ դա մեզ պատիւ չի բերում, քանի որ Հայաստանը Աֆրիկայում չէ, մենք Եւրոպայի մաս ենք»:*

*Այն, ինչ անում է ընդդիմութիւնը, իշխանութիւնների կողմից, ըստ Արամ Սարգսեանի, ընկալւում է իբրեւ պետութեան կայունութիւնը խարխլելու փորձ, եւ այդ անհեթեթութիւն է. «Ասում են, թողէք խախտենք օրէնքները, դուք ձայն մի հանէք, թողէք՝ մենք ինչ ուզենանք անենք այս երկրում՝ ստեղծենք մոնոլոպոլ տնտեսութիւն, դուք ձայն մի հանէք, թողէք լրատուամիջոցներ փակենք, ձայն մի հանէք: Ինչքան են դա շարունակելո՞ւ, ամէն 3 տարին մէկ յատուկ դրութի՞ւն են մտցնելու երկրում»:*

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԶԻՋՈՒՄ Է ՀԱՐԵՒԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ

*Համաշխարհային տնտեսական ֆորումը Մարտի 7-ին հրապարակել է «Ճամփորդութիւն եւ զբօսաշրջութիւն. մրցունակութիւն 2011» զեկոյցը:*

*Զեկոյցում ներկայացուած 139 երկրների շարքում Հայաստանը 90-րդ տեղում է, նախորդ՝ 2009 թուականի զեկոյցի համեմատ արձանագրելով 1 աստիճանի առաջընթաց:*

*Հայաստանի հարեւանները հիմնականում աւելի առաջատար դիրքերում են. Վրաստանը 73-րդ տեղում է, Ադրբեջանը 83, Թուրքիան՝ 50-րդ, Իրանը՝ 114 տեղում է:*

*Եւրոպական 42 երկրների շարքում Հայաստանը 40-րդն է: Զեկոյցում բերուած ցուցակներից եւրոպական ընդամէնը երկու երկիր Հայաստանից աւելի վատ ցուցանիշ ունեն՝ Բոսնիա եւ Հերցեգովինան ու Մոլդովան:*

*Զեկոյցում ներկայացուած ցանկում առաջին տեղերում են Շուեյցարիան, Գերմանիան, Ֆրանսիան, Աւստրիան, Շուեդիան, Միացեալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Կանադան եւ Սինգապուրը:*

*Իւրաքանչիւր երկրի ինդեքսը կազմւում է համադրելով մի շարք պայմաններ, այդ թւում՝ տուեալ երկրի օրէնսդրութիւնը, շրջակայ միջավայրի կայունութիւնը, ապահովութիւնը, առողջութեան ու հիգիենայի պահպանումը, ճամփորդութեան ու զբօսաշրջութեան առաջնահերթութիւնը, աւիացիոն ու ցամաքային տրանսպորտի ենթակառոյցները, գները, բնութիւնը, մարդկային, մշակութային հարստութիւնը:*

*Զեկոյցում նշւում է, որ միջազգային տնտեսական ճգնաժամի դժուարին շրջանից յետոյ զբօսաշրջութեան ոլորտը դանդաղօրէն վերականգնւում է, 2010 թուականին ոլորտում արձանագրուել է 5-ից 6 տոկոսի աճ:*

# ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՆԵՐԳՐԱՒՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ ԱՆՊԱՏԻԺ ԿԸ ՄՆԱՆ

*«Հայաստանի մէջ Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան ծրագրի իրականացումը 2010-ին» զեկոյցի ներկայացման, Մարտ 9-ին հրաւիրուած էին նաեւ ելեւմտական նախարար Վաչէ Գաբրիէլեանն ու տնտեսութեան նախարար Տիգրան Դաւթեանը: Նախարարները պէտք է ներկայացնէին ծրագրի ծիրին մէջ նախորդ տարի արձանագրուած տնտեսական զարգացումը, սակայն, չներկայացուցին: Աւելին, տնտեսական նախարարութենէն զեկոյցի ներկայացման ո՛չ ոք մասնակցեցաւ: Իսկ ելեւմտական նախարարի փոխարինեց նախարարութեան պետական գնումներու մեթոտաբանութեան վարչութեան պետ Կարէն Բրուտեանը:*

*Փորձագէտ Վահագն Ղազարեան յիշեց, որ նախքան հնգամեայ ծրագրի մեկնարկը, Հայաստանի բարձրաստիճան պաշտօնեաները կը նշէին, որ երեք տարին ալ բաւական է անոր իրականացման համար: Սակայն անցած է չորս տարի եւ, ըստ փորձագէտին, իրականացած է ծրագրի միայն մէկ մասը. «Աւելին, արձանագրուել է յետընթաց»:*

*Վահան Ղազարեանի խօսքով՝ Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան ծրագիրը կ'ենթադրէր, որ Հայաստանն ու Եւրոմիութիւնը առեւտրաշրջանառութեան ոլորտին մէջ լուրջ գործընկերներ պիտի դառնան: Սակայն այդ ուղղութեամբ դրական միտում չէ նկատուած: Աւելին, ըստ բանախօսին, եւրոպական երկիրներու փոխարէն՝ ԱՊՀ երկիրները դարձած են Հայաստանի առեւտրային հիմնական գործընկերը:*

*«Նախորդ տարի նոյնպէս առեւտրատնտեսական յարաբերութիւններու մասով էական առաջընթաց չի եղել: Աւելին, Հայաստանի տնտեսութիւնում շարունակուել է նկատուել բեւեռացում, մոնոփոլիզացիա (մենաշնորհ,- Tert.am)»,- ընդգծեց բանախօսը: Ներկաները կը սպասէին, որ անոր այս մեղադրանքներուն պէտք է պարզաբանումներ ներկայացնէր տնտեսութեան նախարարութեան ներկայացուցիչը, որ, սակայն, չէր մասնակցեր քննարկման:*

*«Թրանսփէրընսի ինթըրնէշընըլ» կաշառակերութեան դէմ կեդրոնի Հայաստանի ներկայացուցչութեան գործադիր տնօրէն Վարուժան Հոկտանեան, իր հերթին, նշեց, որ երկրին մէջ կաշառակերութեան դէմ պայքարի առումով՝ իրավիճակը բաւական տխուր է: «Թրանսփէրընսի ինթըրնէշընըլ»-ի կողմէ Հայաստանի մէջ իրականացած հարցումներու մասնակիցներուն 50 տոկոսէն աւելին նշած է, որ երկրին մէջ կաշառակերութիւն հետզհետէ կ'աճի: Հարցման մասնակիցներուն միայն 27 տոկոսը նշած է, որ կառավարութեան՝ կաշառակերութեան դէմ միջոցառումները արդիւնք կու տան:*

*Արձանագրուած է նաեւ, որ կաշառակերութեան մէջ ներգրաւուած բարձրաստիճան պաշտօնեաները Հայաստանի մէջ անպատիժ կը մնան:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՆ-Ն ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ Է ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻՆ

*Հայաստանի փոխարտգործնախարար Շաւարշ Քոչարեանը արձագանքել է պաշտօնական Բաքուի պնդումներին, թէ Մարտի 5-ին Սոչիում կայացած նախագահների եռակողմ հանդիպման ընթացքում «աննշան, բայց դրական փոփոխութիւններ են նկատուել պաշտօնական Երեւանի դիրքորոշումներում»:*

*Հայաստանի արտաքին գործերի նախարարութեան մամուլի ծառայութիւնը տարածել է Քոչարեանի պարզաբանումը, որում նա, մասնաւորապէս, նշել է. - «Ժամանակն է, որ Բաքուն փոխի իր չակերտաւոր «կառուցողական» դիրքորոշումը՝ առանց չակերտների կառուցողական դիրքորոշման»:*

*«Մենք կարիք չունենք փոխելու մեր դիրքորոշումը, քանի որ, ինչպէս նշել է արտգործնախարարը Վիեննայում Մարտի 3-ին կայացած Մշտական խորհրդի նիստում, Հայաստանն «այո» է ասել մադրիդեան առաջարկներին: Դրանից մի քանի շաբաթ առաջ համանախագահները, ելոյթ ունենալով ԵԱՀԿ խորհրդում, կոչ են արել կողմերին յստակ «այո» ասել վերջին առաջարկներին՝ առանց վերապահումների եւ փոփոխութիւնների: Քանի որ Հայաստանը արդէն իսկ «այո» է ասել առաջարկներին, ակնյայտ է, որ համանախագահները փոփոխութիւններ են ակնկալում Ադրբեջանից», - նշել է Հայաստանի փոխարտգործնախարարը:*



*Արտաքին գործոց փոխ-նախարար Շաւարշ Քոչարեան*

*Երկուշաբթի օրը Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին յարաբերութիւնների բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովը յայտարարել էր, որ Սոչիի հանդիպմանը հայկական կողմի դիրքորոշումը որոշակիօրէն տարբերւում էր վերջին մէկուկէս տարիների բանակցային գործընթացում հայկական կողմի որդեգրած դիրքորոշումներից:*

*«Քանի որ բանակցութիւններում հայկական կողմի ցուցաբերած մօտեցումը մինչեւ օրս կատարելապէս ապակառուցողական բնոյթ ունէր, ապա այն փոքր տարբերութիւնը, որ յստակօրէն նկատւում է, կարելի է դրական գնահատել», - յայտարարել էր Նովրուզ Մամեդովը՝ չյստակեցնելով, սակայն, թէ յատկապէս որն է եղել հայկական կողմի պահուածքում նկատուած «դրական» փոփոխութիւնը:*

*Մամեդովը միայն որոշ ենթադրութիւններ էր հնչեցրել. - «Կարծում եմ, որ այս ժամանակահատուածում Հայաստանի ղեկավարները հասկանում են, որ եթէ այսպէս շարունակուի՝ իրենց դիրքորոշումը երբեք յաջողութեամբ չի պսակուի եւ որոշակիօրէն կը փոխի իրենց նախանշած ծրագրերը, քանի որ ադրբեջանական կողմը խիստ արդարացի եւ կառուցողական դիրքորոշում է դրսեւորում՝ փորձելով հարցը լուծել խաղաղ ճանապարհով, բանակցութիւնների միջոցով», - յայտարարել է Նովրուզ Մամեդովը:*

## ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ

*ԼՂՀ Նախագահ Բակօ Սահակեանը Մարտի 7-ին Փարիզում Ֆրանսիայի հայկական կազմակերպութիւնների համակարգող խորհրդի անդամների հետ քննարկել է Արցախ-Սփիւռք կապերի ամրապնդման, Արցախի ներքին կեանքին եւ ադրբեջանա-ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորմանը վերաբերող հարցեր:*

*ԼՂՀ Նախագահը բարձր է գնահատել ֆրանսահայ կազմակերպութիւնների ակտիւ մասնակցութիւնը Արցախի շէնացման, համահայկական նշանակութիւն ունեցող հարցերի լուծմանն աջակցելու գործում:*

*Նախագահ Սահակեանը նշել է, որ Արցախը շահագրգռուած է ֆրանսահայ կազմակերպութիւնների հետ յարաբերութիւնների շարունակական խորացման եւ ընդլայնման մէջ:*



*ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեան*

*Հանդիպմանը ներկայ են եղել Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վիգէն Չիթէչեանը, ԼՂՀ մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարար Նարինէ Աղաբալեանը, Արցախի Հանրապետութեան Նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան պետ Դաւիթ Բաբաեանը, Ֆրանսիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեանը, պաշտօնատար այլ անձինք:*

## ԷՐԶՐՈՒՄԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՅԵՏԱՁԳԱԾ Է ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

*Էրզրումի վարչական դատարանը որոշում ընդունած է յետաձգել Կարսի մէջ տեղադրուած հայ-թրքական բարեկամութեան նուիրուած խաղաղութեան եւ մարդասիրութեան կոթողը քանդելու աշխատանքները: Այս մասին «Անատոլու» գործակալութեան յայտնած է կոթողի քանդակագործ Մեհմէտ Աքսոյի փաստաբան Ասլը Քազանը:*

*Ըստ իրեն, յուշարձանը քանդելու մասին որոշումը պիտի չքննարկուի այնքան ժամանակ, երբ տակաւին չէ աւարտած կոթողին առնչութեամբ իրականցուող դատական ողջ գործընթացը:*

*Յիշեցնենք, որ քանդակագործ Մեհմէտ Աքսոյը դիմումը ներկայացուցած է Էրզրումի դատարան՝ ընդդէմ արձանը քանդելու որոշման: Աքսոյը կը պահանջէ չեղեալ յայտարարել Կարսի քաղաքապետարանի՝ արձանը քանդելու մասին որոշումը:*

*Շաբաթներ առաջ, Կարսի քաղաքապետարանի խորհուրդի նիստին քուէարկութեան դրուած էր արձանը քանդելու հարցը, որուն դէմ քուէարկած էր խորհուրդի նիստին մասնակցող 23 անդամներէն չորսը, կողմ՝ Թուրքիոյ վարչապետ Ռեճէպ Թայիփ Էրտողանի գլխաւորած «Արդարութիւն եւ զարգացում» իշխող կուսակցութեան 11 եւ «Ազգայնական շարժում» ընդդիմադիր կուսակցութեան ութ անդամ:*

*Յունուարին Կարս այցելութեան ընթացքին, Էրտողանը «հրէշաւոր» բառով բնութագրած էր հայ-թրքական բարեկամութեան նուիրուած յուշարձանը եւ կարգադրած անյապաղ քանդել զայն:*

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*համանախագահներու՝ դիպուկահարներուն շփման գիծէն դուրս բերելու վերաբերեալ շարունական կոչերուն համաձայնելու եւ իրագործելու փոխարէն, Ատրպէյճան կը դիմէ հերթական սադրանքի՝ փորձելով լարել մթնոլորտը նախագահական հանդիպումէն առաջ:*

*Հայաստանցի քաղաքագէտներու կարծիքով շարունակաբար կազմակերպելով Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպումները՝ պաշտօնական Մոսկուան կը փորձէ ԵԱՀԿ Մինսկի խումբի ձեւաչափէն դուրս ստեղծել Ղարաբաղեան հարցի լուծման նոր ձեւաչափ:*

*«Կովկաս» ինստիտուտի փոխտնօրէն Սերգէյ Մինասեանի կարծիքով, եթէ միայն Ռուսաստանի դերը ուժեղանայ բանակցային գործընթացին մէջ, ապա Հայաստանի համար պարզապէս աւելի դժուար կը դառնայ զայն վարելը: «Նկատի առնելով ե՛ւ Ֆրանսիայում, եւ ԱՄՆ-ում հայկական կառոյցների դերը, նշանակութիւնը եւ պարզապէս երբ 2-3 դերակատարների հետ ես գործ ունենում, աւելի հեշտ է ինչ-որ մանեւրի հնարաւորութիւն ունենալ», - ըսած է Մինասեան:*

*Ան աւելցուցած է, որ այսուհանդերձ պէտք է նկատի առնել նաեւ այն, որ այսօր Ռուսաստանը շահագրգռուած չէ Ղարաբաղեան շփման գծի վրայ ռազմական գործողութիւններու վերսկսմամբ: «Պատերազմի վերսկսման դէպքում Ռուսաստանը ստիպուած է լինելու ընտրութիւն կատարել՝ մի կողմից իր դաշնակից ՀԱՊԿ-ի անդամ Հայաստանի եւ միւս կողմից՝ բաւականին կարեւոր էներգետիկ գործընկերոջ՝ Ատրպէյճանի միջեւ», - ըսած է Մինասեան:*

*Իսկ Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւններու հայկական կենտրոնի աւագ վերլուծաբան Մանուէլ Սարգսեանի գնահատմամբ, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկիրներէն Ռուսաստանի ներկայիս ակտիւութիւնը ունի հետեւեալ բացատրութիւնը. - «Ես կարծում եմ, որ այս եռակողմ հանդիպումները իզուր չէ, որ հիմնականում շփման գծի վերաբերեալ են: Ես կարծում եմ, Ռուսաստանի դերը հենց դա է: Ըստ երեւոյթին, եռանախագահող երկրները եկել են համաձայնութեան, որ հենց Ռուսաստանը ստանձնի պարտականութիւնը, որ խաղաղութիւն պահի այստեղ, որովհետեւ Ռուսաստանի ազդեցութիւնը կողմերի զինուած ուժերի վրայ մեծ է. Ռուսաստանն է զինում եւ կարող է շատ կտրուկ առաջարկներ անել եւ անգամ ուլտիմատումներ դնել»:*

*Սարգսեանի գնահատմամբ, այս հանգամանքը ինքնին որոշ վտանգ կը ներկայացնէ, քանի որ Ռուսաստան ոչ միայն Ղարաբաղեան հարցով կ'զբաղուի, այլ նաեւ մեծ ազդեցութիւն ունի երկիրներու ներսը եւ իր ազդեցութիւնը կրնայ որեւէ պահ օգտագործել:*

## 1915-ԻՆ ԶՈՀՈՒԱԾ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*կատարէ այս քայլը, որովհետեւ մինչ օրս իրենք չունէին անհրաժեշտ փաստաթղթերը՝ Թուրքիոյ մէջ սպաննուած լրագրողներու ցանկին վրայ հայ մտաւորականները ընդգրկելու համար:*

*«Մենք այդ հասկցանք, երբ «Ձերբակալուած լրագրողներու համերաշխութեան պլատֆորմ»-ի կազմած ցանկը հասաւ մեզի: Լրագրող Ալի Բայրամօղլի Ապրիլի 24-ին գրած էր հայազգի սպաննուած լրագրողներու մասին եւ մենք հասկցանք, որ մենք թերի ցանկ ունինք: Այժմ մենք օգնութիւն կ'ակնկալենք՝ ցանկի վրայ աւելի շատ անուններ աւելցնելու համար»,- ըսած է ան:*

*Թուրքիոյ մէջ սպաննուած լրագրողներու ցանկին վրայ ընդգրկուած է 76 անուն: Մինչ այժմ ցանկի հայազգի միակ անունը «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքն էր:*

Հայ news am

## ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՔՐԷԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՒՈՒՄ ՀԱՅԱԶԳԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԸ



Հայազգի հրապարակախօս, լրագրող Սեւան Նշանեանը 3 տարի 4 ամիս ազատազրկման է դատապարտուել Թուրքիայի արեւմուտքում գտնուող փոքր Շիրինջ գիւղում ապօրինի շինարարութիւն կատարելու համար: Նման որոշում է կայացրել Շելջուկի շրջանային քրէական առաջին ատեանի դատարանը:

«Վերջին 2 տարիների ընթացքում իմ դէմ մօտ 17 քրէական գործ է յարուցուել, եւ այդ բոլորը անօրինական կառոյցների մեղադրանքներ են: Իմ 22 տների ապամոնտաժման որոշումներ են կայացուել ու ինձ կարող են դատապարտել աւելի քան 16 տարուայ ազատազրկման», Չորեքշաբթի օրը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հեռախօսազրոյցում պատմեց Նշանեանը:

Նրա պարզաբանումներով, անցած 27 տարիների ընթացքում Շիրինջ գիւղում, որը հին յունական բնակավայր է համարւում, կառուցապատումները օրէնքով արգելուել են, բայց գործնականում գիւղի բոլոր բնակիչները, ինչպէս եւ ինքը, տներ, հիւրանոցներ, խանութներ ու ռեստորաններ են կառուցել առանց օրինական թոյլտուութեան:

«Ես կասկածում եմ, որ իմ քաղաքական ակտիւութեան պատճառով մի որոշակի պահից արշաւ սկսուեց իմ դէմ, որի նպատակն էր ինձ վտարել գիւղից, քանդել կամ բռնագրաւել այն ամէնը, ինչ ես կառուցել եմ այդ գիւղում», - կարծիք յայտնեց Սեւան Նշանեանը:

Նա պատմեց, որ երկու շաբաթ առաջ Իզմիրի տեղական իշխանութիւնները փորձել են ապամոնտաժել իր սեփականութիւն հանդիսացող շինութիւնները, բայց վերջին պահին Անքարայի կենտրոնական կառավարութիւնը միջամտել է եւ ապամոնտաժման աշխատանքները դադարեցուել են:

Թուրքիայի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարը իրավիճակը տեղում ստուգելու նպատակով անձամբ այցելել է այդ գիւղը եւ, իրավիճակը վերցնելով իր վերահսկողութեան տակ, փորձում է խնդրի իրական լուծումներ գտնել:

Միաժամանակ Սեւան Նշանեանը ընդգծեց, որ Թուրքիայում կառավարութիւնը վերահսկողութեան չունի դատարանների նկատմամբ, եւ գրեթէ շաբաթը մէկ՝ դատարանն իրեն ազատազրկելու որոշում է կայացնում:

Անդրադառնալով իր մասնագիտական գործունէութեանը՝ հայազգի հրապարակախօսը յայտարարեց, որ նման յարձակումների պատճառով չի պատրաստւում նահանջել եւ համոզմունք յայտնեց, որ կը կարողանայ յաղթահարել բոլոր դժուարութիւնները:

## ՏԻՆՔԻ ՄԱՍԻՆ ԳԻՐՔ ԳՐԱԾ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂԻՆ ՏԱՐԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ



Թուրքիայում «էրգենեկոն»-ի շրջանակներում ձերբակալուած լրագրողներ Նեդիմ Շեներն ու Ահմեդ Շըքըն ներկայացուել են դատարան:

Թրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ լրագրողներին դատարանում հարցաքննելու էՍտամպուլի Բեշիքթաշի դատարանի դատախազ Ջեքերա Օզը: Բազմաթիւ լրագրողներ են հաւաքուել դատարանի դիմաց՝ աջակցելու իրենց ձերբակալուած գործընկերներին:

Նշենք, որ Թուրքիայում «էրգենեկոն»-ի գործի շրջանակներում Մարտի 3-ի առաւօտեան մի շարք անձանց տներում խուզարկութիւններն աւարտուել են ձերբակալութիւններով, որոնց մէջ է յայտնուել նաեւ Տինքի սպանութեան մասին գիրք գրած, Milliyet-ի թղթակից Նեդիմ Շեները:

Նեդիմ Շեների բնակարանի խուզարկութիւնը աւարտելուց յետոյ նրան ձերբակալել եւ տեղափոխել են ոստիկանութիւն: Ոստիկանական մեքենան նստելիս լրատուամիջոցների ներկայացուցիչները հարցրել են, թէ ձերբակալուե՞լ է: «Այո, Հրանտի համար, արդարութեան համար»,- ասել է Նեդիմ Շեները եւ նստել մեքենան: Այդ ընթացքում փողոցում հաւաքուած հարեւաններն ու անցորդները ծափերով են ողջունել Շեների խօսքը:

Նեդիմ Շեների հրատարակած «Տինքի սպանութիւնը եւ հետախուզութեան ստերը» գիրքը մեծ արձագանք է գտել Թուրքիայում, որի պատճառով լրագրողի դէմ ոստիկանութիւնը դատական հայց էր ներկայացրել, սակայն դատարանը ի վերջոյ արդարացրել է նրան:

## ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 3ՐԴ ԱՆԳԱՄ Է ԴԻՄԵԼ ԴԱՏԱՐԱՆ՝ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ստամպուլի հայ համայնքի ներկայացուցիչները կրկին դատական հայց են ներկայացրել Թուրքիայի ՆԳ նախարարութեան եւ Ստամպուլի նահանգապետի դէմ:

Թրքական Hurriyet Daily News-ի փոխանցմամբ՝ Ստամպուլահայ համայնքի ներկայացուցչի կողմից ներկայացուած դատական հայցը կապուած է Պոլսոյ հայոց պատրիարքի ընտրութեան իրաւունքի հետ: Հայց ներկայացնողի ինքնութեան մասին ոչինչ չի հաղորդւում:

Նշենք, որ 1 ամիս առաջ թրքական դատարանը մերժել էր ստամպուլահայերի «Ցանկանում ենք ընտրել մեր պատրիարքին» նախաձեռնող խմբի հայցը՝ շեշտելով, թէ հայցի քննարկումը չի մտնում դատարանի իրաւասութիւնների մէջ:

Յիշեցնենք, որ 2010-ի Դեկտեմբերին ստամպուլահայերի «Ցանկանում ենք ընտրել մեր պատրիարքին» նախաձեռնութեան կողմից կազմակերպուել էր մամուլի ասուլիս, որի ընթացքում ներկայացուել են պահանջները, ըստ որի, անհրաժեշտ է չեղեալ յայտարարել թրքական կառավարութեան կողմից Արք. Աթէշեանին փոխպատրիարք նշանակումը եւ կազմակերպել նոր պատրիարքի ընտրութիւններ: Նախաձեռնող խումբն իր պահանջները նամակով ուղարկել էր Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ էրդողանին, ինչպէս նաեւ դիմել վարչական դատարան: Նախաձեռնող խմբի մէջ են յայտնի ստամպուլահայեր՝ Յարութ Օզերը, Տիգրան Ալթունը, Մարկար Եսայեանը, Կարօ Պալեանը եւ այլոք:

Ներկայիս Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Արք. Մութաֆեանը անկողնային հիւանդ է: Ստամպուլահայ համայնքի մի մասը կարծում էր, որ պէտք է ընտրուէր համապատրիարք, քանի որ պատրիարք կարող է ընտրուել միայն նախկին պատրիարքի մահուան դէպքում: Ստամպուլահայերի միւս մասն էլ պնդում էր, թէ ոչ թէ համապատրիարք, այլ՝ պատրիարք պէտք է ընտրել: Այս խօսակցութիւնները թէժ քննարկւում էին, երբ թրքական կառավարութիւնը յայտարարեց իր որոշումը, որով պարզապէս նշանակուեց փոխպատրիարք:



# ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ՝ 100 ՏԱՐԵԿԱՆ

*ԱՐՄԷՆ ՔՈԼՈՅԵԱՆ*

*2011 Թուականը յոբելիանական է՝ լրացաւ կանանց միջազգային օրուայ 100-ամեակը: Ընդ որում՝ առաջին անգամ այն նշուել է ոչ թէ Մարտի 8-ին, այլ 19-ին:*

*1911 Թուականին այդ օրը Աւստրիայում, Դանիայում, Գերմանիայում եւ Շուէյցարիայում աւելի քան մէկ միլիոն մարդ մասնակցել է երթերի, պահանջելով կանանց տալ աշխատելու եւ քուէարկելու իրաւունք:*

*1908 Թուականի Մարտի 8-ին Նիւ Եորքում սոցիալ-դեմոկրատների նախաձեռնութեամբ կանայք անցկացրել են բողոքի ակցիա՝ «դատարկ կաթսաների երթը»: 1909 Թուականին Ամերիկայում սոցիալիստական կուսակցութիւնն ընդունել է կանանց իրաւունքների պաշտպանութեան հռչակագիրը:*

*1910-ին ամերիկուհիների պատուիրակութիւնը մասնակցել է Գոպենհագենում գումարուած Երկրորդ ինտերնացիոնալին, որի շրջանակներում տեղի է ունեցել կանանց առաջին միջազգային կոնֆերանսը: Ամերիկուհիները Գոպենհագենում հանդիպել են գերմանուհի սոցիալիստ (յետագայում՝ կոմունիստ) անուանի քաղաքական գործիչ Կլարա Ցետկինին, ով կոնֆերանսին առաջարկել է սահմանել կանանց իրավունքների պաշտպանութեան յատուկ օր:*

*Առաջին տարիներին յստակ ժամկէտ չի եղել, այդ օրը նշել են Մարտի 2-ին, 9-ին, 12-ին, Մայիսի 12-ին: 1917 Թուականի Փետրուարի 23-ին, որը նոր տոմարով Մարտի 8-ն է, Պետրոգրադի տեքստիլի գործարանի կանայք՝ ի նշան սոցիալիստների մօտ կանանց օր համարուող Մարտի 8-ի, գործադուլ են յայտարարել: Տարիներ անց՝ 1921 Թուականին Կանանց երկրորդ կոմունիստական կոնֆերանսը որոշել է կանանց օրը տօնել Մարտի 8-ին:*

*1966 Թուականից Խորհրդային Միութիւնում Մարտի 8-ը հռչակուել է ոչ աշխատանքային օր: 1975 Թուականին նաեւ ՄԱԿ-ը՝ կանանց տարուայ առիթով որոշել է այդ օրը նշել Մարտի 8-ին:*

*Այսօրուան դրութեամբ երեք տասնեակ երկրներում, այդ թւում՝ Հարաւային Կովկասի 3 հանրապետութիւններում Մարտի 8-ը պաշտօնապէս է նշւում: Ընդ որում՝ Ջինաստանում եւ Մադագասկարում դա ոչ աշխատանքային օր է միայն կանանց համար:*

*Այսօր 48 երկրներում տեղի կ'ունենայ ակցիա, որի անունն է «Միացիր ինձ կամրջին»՝ կանայք հաւաքուելու են կամուրջներին, ձեռք ձեռքի բռնած եւ պաստառները պարզած՝ վանկարկելու են իրենց իրաւունքների պաշտպանութեան պահանջով կարգախօսներ:*

*«Կինը յանուն կնոջ» անուամբ բրիտանական հասարակական կազմակերպութեան ղեկավար Քեթ Նասթեդն ընդունում է, որ Արեւմուտքում Մարտի 8-ի նշանակութիւնը նուազել է:*

*«Ամերիկայում, Դանիայում, Բրիտանիայում կանայք արդէն մեծ նուաճումներ ունեն: Սակայն մեծ թուով երկրներում կանանց յուզում են հարցեր, որոնք անհամեմատ աւելի բարդ են, քան 100 տարի առաջ մեր օրակարգի խնդիր դարձած ընտրելու իրաւունքը»,- ասել է Նասթեդը եւ աւելացրել. - «Այսօր Քաբուլում իր իրաւունքի համար պայքարող կինը ենթարկւում է այն ռիսկի, որին կանայք 100 տարի առաջ ենթարկուել են Լոնտոնում եւ Ամերիկայում»:*






COURTESY IMAGE

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE.
PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

massispost.com
daily news updates



# ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ

## (ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՆԱԳԵԼԻ ԱԹԱՅԵԱՆԻ ՀԱՄԵՐԳԻ ԱՌԹԻՒ)

***ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ***

*... Վաղո՜ւց դասական երաժշտութիւն լսելու հաճոյքը չէինք վայելել: Սխալ չհասկացուեմ: Ես նկատի ունեմ կենդանի կատարմամբ համերգ՝ Լոս Անճելըսի տարածքում ապրող երաժիշտների կատարմամբ: Թէ չէ ստացուել է այնպէս, մանաւանդ վերջին տարիներին, որ, թւում է, թէ մենք այստեղ շնորհալի երաժիշտներ չունենք, եւ Հայաստանն է որ մեզ պիտի «մատակարարի» երաժիշտ-կատարողներով:*

*Իրականում՝ «մատակարարում» է, եւ էն էլ ո՜նց: Եւ այնպիսի մոլուցքով ու փութաջանութեամբ, որ մեզ, այստեղի երաժիշտներիս մնում է կամայ թէ ակամայ բեմը եւ երաժշտասէր հասարակութեանը զիջել «հայաստանցիներին»: Անշուշտ, խօսքս հիմնականում վերաբերւում է մեր այստեղի բեմը ողողած հայաստանեան «աստղիկներին»: Թող էլի գան ու գնան, բայց ոչ իրար հրմշտկելով ու մէկը միւսից առաջ ընկնելու մոլուցքով տարուած:*

*Մեզանում դէպքից-դէպք տեղի ունեցող դասական երաժշտութեան համերգները, մեղմ ասած, լայն հասարակութեանը հասու չեն, թէեւ այն իրականացնողները ծրագրում ընդգրկում են հասարակութեանը մատչելի երաժշտական ստեղծագործութիւններ:*

*Դասական եւ սիմֆոնիկ երաժշտութեան համերգների աւանդոյթը տարիների ընթացքում իր տեղը զիջել է ժամանակավրէպ, թիթեռնիկի կեանք ունեցող թեթեւ երաժշտութեան, «օրուայ» երգերին:*

*Այդ է պատճառը, որ ամէն մի փորձ, որ մեզ յիշել է տալիս թէ մաքուր, ազնիւ երաժշտութիւն էլ կայ, ու այն կարելի է վայելել կենդանի կատարումով՝ ոգեւորում է մեզ ու մտածել տալիս թէ ամէն ինչ դեռ կորած չէ:*

*Նման մի խինդ, հաճոյք, բերկրանք՝ եթէ կ՚ուզէք, ապրեցինք մենք, ներկայ լինելով Փետրուար քսանեօթին՝ Հոլիվուտի Forest Lawn-ի ամենավերին մասում գտնուող Liberty Hall սրահում, երբ ներկայ եղանք New Valley Symphony նուագախմբի համերգին: Հաճոյքն ու բերկրանքը պայմանաւորուած էր հիմնականում ԵՐԵԽՈՅԹ հասկացողութեամբ:*

*Մի խումբ խենթեր, դասական երաժշտութեան նուիրեալներ, միանգամայն անվճար, քեզ են հրամցնում գրեթէ երկու ժամ տեւող հաճելի երաժշտութիւն:*

*Շնորհալի դիրիժոր Արմէն Կարապետեանը տարիների ընթացքում իր շուրջն է հաւաքել յիսունի հասնող երաժիշտների, որոնք տարին չորս կամ աւելի անգամներ, հիմնականում մատչելի դասական երաժշտութեան համերգներ են տալիս վերոյիշեալ սրահում:*

*Իսկական արուեստագէտը չի կարող չնուագել, նա պիտի հոգեկան բաւարարութիւն ստանայ, դա՛ է կարեւոր: Այդ է պատճառը, որ նուիրատուութիւններով հաւաքուած չնչին վարձատրութիւնը զուտ խորհրդանշական նշանակութիւն ունի նրանց համար:*

*Այս նուագախումբը իր ունկնդիրն ունի: Այդ է պատճառը, որ ծանուցումներ չեն լինում ոչ մամուլում եւ ոչ էլ հեռուստատեսութեամբ (ես գոնէ չեմ տեսել, չեմ լսել): Երաժիշտներն են ունկնդիր-հանդիսատես «բերում»:*

*Իսկական ընտանեկան, բարեկամական համերգ էր այդ օր: Հինգ հարիւրի հասնող հանդիսականներ, բոլորը կարծէք թէ գիտեն միմեանց, թւում է թէ ամէն մի ունկնդիր, ի՛նքն էլ է մասնակից երաժշտութեան արարմանը, ինքն է բեմում, ապրում, շնչում է ղեկավարի հետ:*

*Դա՛ էր որ ինձ հիացրեց: «մարդիկ գո՛րծ են անում, գո՛րծ», դա՛ է կարեւորը:*

*Եւ՝ ամենամեծ գործ անողը օրուայ հերոսուհին էր, այո՛, շնորհաւոր դաշնակահարուհի, մանկավարժ Նագելի Աթայեանը:*

*Ես գուցէ սխալւում եմ, կամ տեղեակ չեմ այնքան, բայց ես դեռ չեմ լսել, որ ուեւէ կին դաշնակահարուհի, որքան էլ տաղանդաւոր, Գերշուինի նուագի, Գերշուինի կատարի, էլ՝ «Ռապսոդիան՝ Բլիւզի ոճով» բարդ ու խելայեղ ստեղծագործութիւնը: Ինչպէս ասում են՝ այդ գործը «տղամարդու գործ» է:*

*Համարձակութիւն, նպատակադրում, ոչ մի դժուարութեան առջեւ կանգ չ՚առնելու հաստատակամութիւն էր հանդէս բերել դաշնակահարուհին՝ այդ դժուարին գործի կատարումը գլուխ բերելու համար:*

*Հետաքրքիր զուգադիպութեամբ, Գերշուինի այդ գործի տեսագրութիւնը ցուցադրուեց Նագելիի համերգի յաջորդ՝ Երկուշաբթի օրը՝ Հայաստանի Ազգային Հեռուստատեսութեամբ, հմուտ երաժշտագէտ, «Առաւօտ» թերթի խմբագիր Արամ Աբրահամեանի «Պարականոն» հաղորդման ընթացքին:*

*Երեւանեան հաղորդման մէջ մենակատարն ու դիրիժորը՝ հանճարեղ Բերնստայնն էր: Անշուշտ, համեմատութիւններն անիմաստ են այս պարագային: Սակայն, Բերնստայնի կատարումը դիտելով ու լսելով, ես մէկ աւելորդ անգամ համոզուեցի, որ Նագելիի համարձակութիւնը լիովին արդարացուած էր: Միանգամայն զարմանալ կարելի էր, թէ ինչպէ՞ս էր այդ փխրուն հոգու տէր կինը, տղամարդուն յատուկ թափով ու ուժգնութեամբ, քնքոյշ մատներով այդպիսի զօրեղ հարուածներ տեղում դաշնամուրի ստեղնաշարի վրայ: Երաժշտութեան մեկնաբանման, կատարման առումով ամէն ինչ իր տեղում էր:*

*Դիրիժորն ու մենակատարը փոխըմբռնման լիարժէք գիտակցումով կարողացան արժանի մակարդակ ցոյց տալ: Ինքը՝ ստեղծագործութեան ժանրն արդէն լուրջ խնդիրներ է դնում մենակատարի առջեւ: Նախ՝ պիտի փոքրիշատէ ծանօթ լինել ամերիկեան ջազի բնոյթին, ռիթմերին ու տարատեսակ երանգաւորումներին: Գերշուինի այս ստեղծագործութեամբ պիտի ապրել, ապրել նրա բազմազոյն ռիթմերով, փոքրիշատէ իմանալ սեւամորթների կենցաղն ու լսած լինել նրանց ժողովրդական սպիրիչուելսները (եկեղեցական, հոգեբանական երգեր):*

*Գերշուինն այս ստեղծագործութիւնը գրել է անցեալ դարի քսանականներին, երբ դասական կոմպոզիտորներին այնքան էլ հասու չէ ջազային երաժշտութիւնը: Այդ է պատճառը, որ քսաներորդ դարի առաջին կէսին արժանի ձեւով չհասկացուեց Գերշուինի Ռապսոդիան՝ այնպիսի խոշոր դաշնակահարների կողմից, ինչպիսիք էին Պրոկոֆեւն ու Ռախմանինովը:*

*Քսաներորդ դարի երկրորդ կէսից էր, որ Գերշուինի Ռապսոդիան գրաւեց աշխարհը:*

*Կրկնում եմ, ես, թերեւս սխալւում եմ, բայց Գերշուինի Ռապսոդիայի հայ կատարող անուն չգիտեմ, չեմ յիշում, մանաւանդ՝ կին կատարողի:*

*Ժողովրդի բուռն ծափերին ի պատասխան, Նագելի Աթայեանը ծրագրից դուրս կատարեց Արամ Խաչատուրեանի «Սրերով պարը»:*

*Նագելին՝ երբեմնի իմ պրոֆեսոր Ռոբերտ Աթայեանի դուստրն է: Կոմիտասագէտ, երաժշտագէտ-կոմպոզիտոր Աթայեանը որոշակի դեր է խաղացել իմ ճակատագրի ձեւաւորման խնդրում: Նագելին աւարտել է Երեւանի պետական երաժշտանոցը, այնուհետեւ կատարելագործուել Մոսկուայում՝ նշանաւոր դաշնակահարներ՝ Եակով Զակի եւ Եակով Ֆլիէրի հոգածութեան ներքոյ: Նագելիի մայրը՝ շնորհաւոր դաշնակահարուհի Մարջան Մխիթարեանը եղել է Կոմիտասի դաշնամուրային մանրանուագների առաջին կատարողներից մէկը հայ իրականութեան մէջ:*

*Ես որեւէ դասական երաժշտութեան համերգի չեմ տեսել մեծաթիւ հայ երաժիշտների, որոնք եկել էին այդ օրուայ համերգին: Կարեւոր մի փաստ, որ վկայութիւնն է դաշնակահարուհի Նագելի Աթայեանի գրաւիչ ու առինքնող արուեստի:*

*Դիրիժոր Արմէն Կարապետեանը հմուտ ղեկավար է ու շնորհալի ջութակահար: Իր ղեկավարած նուագախմբի անդամների գրեթէ մէկ երրորդը հայ երաժիշտներ են, որոնք գրաւիչ մի օղակի մէջ առնելով իրենց ղեկավարին, ամէն ինչ անում են, որպէսզի նա իր վրայից թօթափի անառողջ լինելու զգացումը եւ շարունակի ծառայել դասական երաժշտութեան տարածմանը:*

*Բիզէի «Կարմէն» օպերայի զոյգ սուիտների հաճելի երաժշտութիւնն ու Բրամսի «Հունգարական պարը» ամբողջացրին New Valley Symphony նուագախմբի տարեկան երրորդ համերգի ծրագիրը:*

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

## 2012-ԻՆ ԵՐԵՒԱՆԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԳԻՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

*Եունեսքոյի որոշումով 2012 թուականին Երեւանը պիտի դառնայ Գիրքի Միջազգային Մայրաքաղաք: Այս առթիւ Հայաստանի գիրքի հրատարակչատուները որոշած են նոր թափ տալ գիրքերու տպագրութեանց: Յառաջիկայ տարի՝ միաժամանակ պիտի նշուի հայ առաջին գիրքի տպագրութեան 500 ամեակը: Նշենք նաեւ որ ներկայիս շատ քիչ գրախանութներ կան Երեւանի մէջ: Յոյս կայ որ այս առթիւ քանի մը գրախանութներ եւս կը բացուին մայրաքաղաքին մէջ:*

## ԹՈՒՐՔԻՈՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

*Թուրքիոյ մշակոյթի եւ Թուրիզմի նախարար Էրթօղրուլ Կիւնայն աշխատանքային այցով հանդիպած է Նիւշտէ եւ այցելած է նաեւ հայկական պատմական եկեղեցին:*

*Թրքական «Տիքհապէր» գործակալութեան համաձայն Էրթօղրուլ Կիւնայն այցելած է տեղւոյն լքուած հայկական եւ յունական եկեղեցիները: Նիւշտէի քաղաքապետի ցուցմունքներուն համաձայն՝ շուտով զոյգ եկեղեցիները պիտի վերանորոգուին: Այսպիսով զարկ պիտի տրուի նաեւ զբօսաշրջութեան, ըսած է ան:*

ՄԻՋԻՆՔ
Կազմակերպութեամբ
Հ.Մ.Մ. Տիկնանց Յանձնախումբին
որ տեղի պիտի ունենայ Մարտ 19, 2011-ին,
Ուրբաթ երեկոյեան ժամը 8-ին
Կարօ Սողանալեան սրահէն ներս:
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
(626) 497-5111 (626) 429-8366

*Մայիս 8 – Մայրերու Օր նկատի առնել*

# ՀԲԸՄԻ ԱՍՊԵՏՆԵՐՈՒՆ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՁԵՌՆԱՐԿԸ ՀԱՅԱՍՊԱՆ ՃԵՄԱԼ ՓԱՇԱՅԻՆ ԹՈՌՆԻԿԸ՝ ԼՐԱԳՐՈՂ ՀԱՍԱՆ ՃԵՄԱԼ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

**ՄԱՐՏ 31, 2011, ԺԱՄԸ 8:00, «ՊՐՈՏ ՀՈԼ», ԵՈՒ.ՍԻ.ԷԼ.ԷՅ.**

*ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ*

*Հայոց Ցեղասպանութեան 96-րդ տարելիցին ընդառաջ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լոս Անճելըսի մէջ գործող Ասպետներու Համախմբումը յախուռն եւ աննախընթաց քայլով մը, Հինգշաբթի, Մարտ 31, 2011-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Եու.Սի.Էլ.Էյ. համալսարանի «Պրոտ Հոլ»-ին մէջ կազմակերպած է իր տեսակին մէջ եզակի հանդիպում մը հայասպան եւ հայու գնդակով սպանուած Ահմէտ Ճէմալի Թոռնիկին՝ լրագրող, «Միլլիէթ» օրաթերթի յարգուած եւ գլխաւոր սիւնակագիր, գիրքերու հեղինակ Հասան Ճէմալի հետ: Ան կ'ապրի եւ կը ստեղծագործէ Իսթանպուլի մէջ: Հասան Ճէմալ հայկական շրջանակներուն ծանօթ անուն է, որպէս քաջ մտաւորական, որ ընդունելով Ցեղասպանութիւնը, կը դատապարտէ զայն, մինչեւ անգամ այցելելով Հայաստան եւ բարձրանալով Ծիծեռնակաբերդ:*

*Այս հանդիպում-դասախօսութիւն-զրոյցը ՀԲԸՄ-ի Ասպետներու ամենամեայ «Երեկոյ մը մտաւորականի մը հետ« շարքին մաս կը կազմէ, որուն խորագիրն է «Տէր-Զօրէն Ծիծեռնակաբերդ»: Երկու յարգելի ու ազդեցիկ զրուցավարներէն առաջինը Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանն է (Վարիչ Եու.Սի.Էլ.Էյ. Համալսարանի Ժամանակակից Հայոց Պատմութեան ամբիոնի): Երկրորդը հայ հանրութեան նուազ ծանօթ, սակայն նոյնքան ազդեցիկ անձնաւորութիւն մըն է՝ Դոկտ. Փամելա Սթայնըր (Inter-Communal Trust-Building Project. Fellow, FXB Center, Harvard School of Public Health & Affiliate). ան Թոռնիկին դուստրն է Օսմանեան Կայսրութեան մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաուի:*

*Դասախօսութեան եւ զրոյցին պիտի յաջորդէ հարց-պատասխանի պահ մը: Այս յոյժ հետաքրքրական երեկոյին մուտքը ազատ է, անվճար: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել ՀԲԸՄ Ասպետներու կայքէջին՝ asbeds@agbuca.org:*

Բանաստեղծ Ալագեազը լսարանին ներկայացաւ հետեւեալ նախաբանով. « Մեծապէս շնորհակալութիւն կը յայտնեմ միութեան վարչութեան եւ նախագահին, որ ինծի առիթ տուեց ելոյթ ունենալու համար: Նոր բանաստեղծութիւններ չէ որ պիտի կարդամ ձեզի, իմ կարդացուելիքը հին յուշեր են՝ երիտասարդական հոգիով, երիտասարդական բանաստեղծութիւններ. վստահ եմ, որ ձեր հաւանութեան կ՚արժանանան, կարծեմ թէ՝ քիչ մը վերանորոգուիլ կ՚ուզեմ ես, ձեզի ալ պիտի վերանորոգեմ: Երկու գիրք ունեմ՝ «Յօղեր ու ցոլքեր», «Սրտի պատառիկներ» անուններով: Ինծի համար բանաստեղծութիւնը ապրում է հոգիով, սրտով, ջիղերով, եթէ բանաստեղծութեան մէջ ապրում չ՚ըլլար, ատիկա կը դադրի բանաստեղծութիւն ըլլալէ»: Ալագեազը իր բանաստեղծութիւնները անգիր եւ ապրումով ասաց, լսարանին գրաւելով եւ արժանանալով ծափահարութեան:

Յարեանցը շնորհակալութիւն յայտնելով Ալագեազին ասաց. «Շնորհակալութիւն Պր. Ալագեազ, նրա համար որ յիշեցրեցիք Ռուբէն Սեւակի՝ «Պզտիկ աղջիկը» եւ Լեւոն Շանթի՝ «Իջէ՜ք, իջէ՜ք երազները» գողտրիկ գրուածքները»: Այնուհետեւ Յարեանցը մտաւ քաղաքականութեան դաշտ ներկայացնելով արաբական աշխարհների բռնկումները եւ նրա վտանգները երրորդ համաշխարհային պատերազմի սեմին մեզ դնելով, նա նկատելով աշխարհի յղի քաղաքական պայմանները զգուշացնում է գրողներին. «Այսօրւայ վիճակը կապ ունի հայ գրողի քաղաքացիական պատասխանատուութեան հետ, հնարաւոր չէ տանը չորս պատերի մէջ նստենք ու լալահեամ երգել, երբ աշխարհը թոհ ու բոհի եւ երրորդ համաշխարհայինը մի միջորմ այն կողմ է: Ես յորդորում եմ քաղաքացիական պատասխանատուութեան բարձրացում լինի իւրաքանչիւր գրողի մօտ»:

Յարեանցի միտքը հաստատելով կ՚ուզէի աւելացնել, որ հայ գրողի եւ մտաւորականի առաքելութիւնը այլ է մեր հայ իրականութեան մէջ համերաշխութիւնը եւ միասնականութիւնը պաշտպանելու առ ի հզօրացումն հայրենիքի եւ պետականութեան ամրապնդման, մեր արժէքների պահպանման ի խնդիր:

Հանդիսավարը բեմ հրաւիրեց Կիմա Կիրակոսեանին ասելով. «Ես խորքից արդէն ծանօթ եմ նրա հեքիաթներին, այդ ժանրը մեր գրական շրջանակներում առայժմս յայտնի չէ ինձ հեքիաթագիր որեւէ գրող, լաւ կը լինի նրանց գտնենք եւ հրաւիրենք մեզ մօտ, մենք պիտի մտածենք նաեւ ժանրային զարգացման մասին, մենք միայն բանաստեղծութեամբ իսկապէս յոգնեցնում ենք միմեանց եւ չասեմ արդէն ձանձրախտի մասին: Կիմա Կիրակոսեանը նոր գրքի վրայ է աշխատում, բարեբախտաբար աւարտուել է եւ լաւ գեղեցիկ գողտրիկ հեքիաթներ ունի, շարունակում է Ղազարոս Աղայեանի աւանդներին հաւատարիմ, համեցէք Կիմա»:

Նա խօսափողի մօտ անցնելով այսպէս սկսեց իր ելոյթը. «Շնորհակալութիւն գրողների վարչութեանը այսպիսի հնարաւորութիւն ընձեռնելու համար, ես ասել էի հեքիաթ պիտի կարդամ, վերջին պահին փոխեցի մտադրութիւնս, միշտ էլ անակնկալով եմ յայտնւում իմ լսողների առջեւ: Այսօր ակնածանքով եւ մեծ երջանկութեամբ պիտի կարդամ իմ գրքից մի հատ-

Տար.ը էջ 18



Ձախից աջ՝ Ալագեազ, Կիմա Կիրակոսեան, Ջանիբեկ Ջանիբեկեան (Կոշեցի), Ագնես Գէորգեան





Կազմակերպութեամբ՝
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Նախագահութեամբ՝
ԱՐՀԻ. ՄԱՆՈՒԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԹԱԳԵԱՆԻ
(Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց)

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ
ԴՈԿՏ. ՀՐԱՆԴ ԱԺԷՄԵԱՆԻ
«Ակնարկ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Հայ Կաթողիկէ Համայնքի Պատմութեան» գիրքին

Գիրքը կը ներկայացնէ՝
ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ՅԱՅՏԱԳԻՐ

Ուրբաթ, Մարտ 18, 2011-ի
երեկոյեան ժամը 7:30-ին,
եկեղեցւոյ «Իսկուհի եւ Անի Գույումճեան»
սրահին մէջ

1510 East Mountain St., Glendale, CA 91207

Մուտքը՝ ազատ Հիւրասիրութիւն

# ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ



***ՀԱՅԿ ԿԻՄԵՐԼԵԱՆ***

*Արարատեան Հայրապետական թեմի (ԱՀԹ) «Արարատ» միութիւնը, թեմի Առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տէր Նաւասարդ Արքեպիսկոպոս Կճոյեանի օրհնութեամբ եւ հոգեւոր առաջնորդ Տէր Յակոբ քահանայ Խաչատրեանի նախաձեռնութեամբ՝ իր գործունէութեան շրջանակներում իրականացնում է նաեւ մի շարք կրթադաստիարակչական ծրագրեր: Լրագրութեան, երգի, սրբանկարչութեան, համակարգչային եւ այլ դասընթացների ընթացքում սաները ստանում են նաեւ հոգեւոր գիտելիքներ:*

*Միութեան նպատակն է՝ հայորդուն մօտեցնել Հայ Առաքելական Ս. Եկեղեցուն, զօրացնել աստուածպաշտութիւնը նրա մէջ, բաժնեկից եւ մասնակից դարձնել առաքելահաստատ մեր Ս. Եկեղեցու առաքելութեանը:*

*«Արարատ» միութիւնը իր առաքելութիւնը իրականացնելու ընթացքին՝ բացում նոր անդամներ եւ աջակիցներ է ձեռք բերել՝ որոնցից ոմանք դեռ մկրտուած չէին: Օրերս «Արարատ» միութիւնը միասնաբար ի կատար ածեց նոր անդամներից 19-ի մկրտութեան արարողութիւնը:*

*Փետրուարի 27-ին «Արարատ» միութեան հին եւ նոր անդամները միասնաբար այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ս. Վարդան եւ Ս. Յովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանում՝ միութեան հոգեւոր հովուի ձեռամբ կատարուեց 19 անձերի մկրտութիւնը: Նրանց հոգեւոր դաստիարակի՝ կնքահօր պարտաւորութիւնը ստանձնեցին «Արարատ» միութեան դպրաց, սարկաւագաց դասից եւ աջակից-բարերարներից ընտրուած մի քանի անդամներ, ովքեր իրենց հաւատքով, եկեղեցասիրութեամբ օրինակ կը ծառայեն նոր-նոր եկեղեցի ոտք դրած երիտասարդների համար:*

*Մկրտութեան արարողութիւնից յետոյ՝ ուխտաւորները այցելեցին վեհարան: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Արարատ» միութեան ուխտաւորներին:*

*Ողջունելով ուխտաւորների այցը Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները եւ օրհնութիւնը բերեց նորոգ մկրտեալներին եւ կնքահայրերին՝ յաջողութիւններ մաղթելով «Արարատ» միութեան ձեռնարկներին: Նորին Սրբութիւնը նաեւ յուշանուէրներ յանձնեց մկրտուած անձանց, նրանց կնքահայրերին եւ «Արարատ» միութեան համանուն երգչախմբին:*

*Միութեան հոգեւոր առաջնորդը իր խօսքում իր երախտագիտութիւնը փոխանցեց Վեհափառ Հայրապետին՝ վստահեցնելով, որ դեռ 1988թին՝ ներկայիս Հայրապետի Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ լինելու տարիներին, նրա իսկ ձեռամբ հիմնադրուած «Արարատ» միութիւնը հաւատարիմ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ մասնակից նրա առաքելութեանը:*

*Հանդիպման ընթացքում փոքրիկ համերգային ծրագրով հանդէս եկաւ «Արարատ» միութեան համանուն երգչախումբը: Նորին Սրբութիւնը պատասխանեց ուխտաւորներին յուզող հարցերին: Հանդիպման աւարտին բոլոր ներկաները լուսանկարուեցին Վեհափառ Հօր հետ:*

*Ուխտաւորները հաւաքական աղօթք կատարեցին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, որից յետոյ ուղեւորուեցին ընդհանրական ճաշի:*

*«Արարատ»-ի յաջորդ կանգառը Վաղարշապատ քաղաքի «Վան» համալիրն էր՝ այնտեղ էլ շարունակեցին մկրտութեան առթիւ սկսուած տօնակատարութիւնը, որի մասնակիցներին մատուցուեց նաեւ Մատաղի Ս. Ճաշ:*

*Մարտի 2ին ԱՀԹ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղոցում երեկոյեան ժամերգութիւնից յետոյ՝ «Արարատ» երգչախմբի, կնքահայրերի, կնքամայրերի եւ մկրտուածների մասնակցութեամբ՝ «Արարատ» միութեան հոգեւոր հովիւ Տէր Յակոբ քահանայ Խաչատրեանի ձեռամբ կատարուեց մկրտուածներին միւռոնից դուրս բերելու արարողութիւնը: Միջոցառմանը ներկայ եղան նաեւ «Արարատ» միութեան այլ անդամներ, աջակիցներ եւ մկրտուածների բարեկամները:*

*Արարողութեան ընթացքին ջրով լուացուեցին մկրտուածների միւռոնով դրոշմուած զգայարանները եւ կնքահայրերը սրբիչներով սրբեցին նրանց: Վառուեցին մկրտութեան ժամանակ գործածուած մոմերը՝ որպէս խորհրդանիշ մեր Տէր Յիսուս Քրիստոսի լոյսի, որի առաջնորդութեամբ մկրտեալները պիտի քայլեն իրենց ամբողջ կեանքի ընթացքում:*

*Նարօտները՝ կարմիր ու սպիտակ հիւսուած թելերը շղթաներով փոխարինուեցին, բայց կը պահպանուեն որպէս խորհրդանիշը խաչի վրայ մարդկութեան մեղքերի համար յեղուած փրկագործական արեան:*

*Արարողոթիւնից յետոյ՝ Տէր Յակոբը իր օրհնութիւնը եւ բարեմաղթանքները յղեց ներկաներին:*

*Միջոցառումը աւարտուեց «Արարատ» միութեան համանուն երգչախմբի երգերով եւ հիւրասիրութեամբ:*

*Այսուհետ՝ եւս 19 անձեր կը կրեն Խաչը՝ որպէս քրիստոնեայի նշան, օրհնութեան արտայայտութիւն, քայլելով խաչի ճանապարհով լիարժէք մասնիկը կը լինեն «Արարատ» միութեան եւ Հայ Առաքելական Սուրբ եղեցեցու:*



# ԱՐՄԷՆ-ՀԱՅԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՀԱՒԱՏՔ

**ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ**

*«Իրանական դիցանունները կրող աստուածներից առաջ հայերն ունեցել դիցաբանութեան հին համակարգ, արդասիքը հայոց հնագոյն ինքնատիպ մշակոյթը»: Մովսէս Խորենացի*

*(Հատուած՝ «Արատտա-Արմինա, Հայկական Լեռնաշխարհ» Անտիպ էսսէյից)*

Հայոց հաւատք, այն կոչել էին նաեւ հեթանոսական կրօնք հայոց: Հեթանոս, ասորական «Հթնոս-հեթանոս» նախաքրիստոնէական ու ոչ քրիստոնէական կրօնքները բնորոշելու անուանումն էր: Հայոց Քրիստոնէական հաւատքի աստուածաբանական, պատմական գրականութեան մէջ այն որակուել էր որպէս վայրենիների ու բարբարոսների ուսմունք, նրանց հետեւորդներն էլ բարբարոսներ: Քրիստոնեայ հեղինակներ, նման որակաւորումով անբարեացակամ վերաբերմունք էին ցուցաբերել նրանց պաշտամունքների, հաւատալիքների, դիցաբանութեան նկատմամբ եւ ընդհանրապէս բոլոր ոչ Քրիստոնէական կրօնքների հանդէպ:

«Հեթանոս»ների ու նրանց հաւատքի պաշտամունքի հանդէպ նման վերաբերմունքը քարոզարշաւ էր իրենց կրօնքի առաւելութիւնը փառաբանելու համար: Նրանք նպատակադրուել էին հերքել միւս միաստուած կրօնքների՝ Պուտտայականութեան, Մահմետականութեան, Յուդայականութեան կրօնական ծէսերի արարողութիւնների ոգեպաշտական եւ նախաքրիստոնէական կրօնքների պատկերացումները:

Այդ ինչպէս եղեւ, ինչպէս հանդուրժեցին, որ Քրիստոնէական խոշորագոյն հատուած, համաշխարհական կոչուած Կաթոլիկներ իրենց Աստուծոյ Որդի՝ Աստուածորդու, ծննդեան օրը նախաքրիստոնէական արեւի աստուած Միթրա, արմէնների Միհրի, ծննդեան օրուան՝ Դեկտեմբերի 25ին փոխադրեցին: Հեթանոս հռովմէացիների ձմեռային արեւածագի օրն էր այն, արեւի աստուած Միթրայի ծննդեան պաշտամունքի օրն էր, որի մեհեանի շուրջ հեթանոսական հրճուանքով, գինարբուքով, զոհաբերական ծէսերով, կեանքի հեշտանքով «արեւի» նոր դարձն էին փառաբանել, որ գալիք գարնան, բնութեան հեքիաթային զարթօնքի բերկրանքով արբենային: Այդ ինչպէս եղեւ, որ Արմինա-Հայաստանում զէնքով, բռնութեամբ պարտադրուած հեռու հարաւի Վարդապետի հաւատքը փառաբանող տօները փոխադրեցին իրենց հեթանոս նախնիների տիեզերական պաշտամունքի խորհուրդին նուիրուած տօնախմբութիւնների օրերին:

Արմէն-Հայ, երբ քո նոր հաւատքի Տեառնընդառաջի, Ծաղկազարդի, Ծննդեան, Յարութեան, Համբարձման, Խաչվերացի, Վարդավառի, Վերափոխման, Պայծառակերպութեան տօների արարողութիւններին ես գնում, քու նախնիների տիեզերական հաւատքի լուսեղէն ճառագայթներին բազմած գնա՝ Արայի Անահիտի, Միհրի, Վահագնի, Աստղիկի, Նանէի, Տովինարի, Վանատուրի, Տիրի հայոց աշխարհի Աշտիշատի, Բագարանի, Բագրեւանդի մեհեաններ: Շուրջ պարի շարքեր մտիր քու շինական նախնիների, պարի ելած քու Արմէն-Հայ արքաների, իշխանազունների հետ: Արբեցիր կեանքի վայելքով, Թասերով գինի ըմպիր, գնա փառաբանիր քու տիեզերական աստուածներին, կաւէ ամաններով ջուր ցանի՛ր հայոց պարմանուհիների վրայ, ծռի՛ր նրանց իրանների առաջ, ըմպի՛ր նրանց մարմիններից չիթած, նրանց հեշտանքով լցուած Տովինարի ջուրը: Մեհեանների որմերը գրկած նռնենիներից կարմիր կրակով պայթած նռներ քաղի՛ր, գա՛րկ այն նրանց գրկած սիւներին, որ քեզ ու քու հեթանոս աստուածներին յաւերժութիւն լինէր: Ըմպիր որմերից հոսող նրանց «արիւնը», որ յաւերժ լինես:

Այդ ինպէս եղեւ, ինչպէս հանդուրժեցին, որ նոր հաւատքի պաշտամունքի տաճարները կառուցէին հեթանոս նախնիների փլած մեհեանների վրայ, գնացին այնտեղ աղօթելու, փրկութիւն փնտռելու, Տովինարի ջրով մաքրագործուելու, կրակով մեղքը այրելու, արեւ-արեգակին արդար կոչելու, Միհրի լոյսի բխման կողմը երկրպագելու, նոյնիսկ քեզ հողին ամփոփելուց ճակատդ դէպի արեգակի կողմը տանելու: Եւ մուրճը ձեռքին իրենց Վարդապետին լոյսի ջահերով իջեցրին Այրարատ, փլած մեհեանի որմերի վրայ նրա պաշտամունքին տաճար պատելու: Մտե՞լ ես մեհեանի նկուղ, հազար, հազար տարիներ յետոյ էլ նրա որմերը կանգուն են դեռ, նրա ատրուշանի մոխիրում անթեղուած կայ կրակը Արմէն-Հայերի նախնիների տիեզերական ոգու հաւատքի...:

Հեթանոս էին անուանել իրենց արարչական նախնիներին: Այո, հեթանոս էին, սակայն ոչ բարբարոս: Նրանց աստուածները ծնուել էին իրենց կրակ լեռնաշխարհի գահին բազմած ձիւնոտ գագաթին: Նրանք իրենց նման մարդացած էին, մարմնաւորած բնութեան, տիեզերքի երեւոյթները: Նրանք, իրենց հոգիներում պայթած լոյսի, սիրոյ, բարութեան, գեղեցկութեան, պատերազմի, քաջութեան, արարչութեան, բանաստեղծութեան կրողներն էին: Կենդանի մարդիկ, իրենց հետ քայլող, իրենց հետ կռիւ գնացող, իրենց հետ կեանքի վայելքով արբեցող, իրենց հետ գինի ըմպող: Տունկի իջած պաղատանքով փրկութիւն չէին որոնել նրանցից: Փառաբանել էին նրանց, իրենց պարգեւած արարչութեան, իրենց շնորհուած արարչագործ իմաստութեան համար, իրենց երկրին հոսած բարիքի համար:

Տուֆակերտ կրակ քարերով յառնած աստուածներն Արմէն-Հայերի, մարդացած խորհրդանիշն էին իրենց երկրի ծաղկող բնութեան մշտանորոգ արարչութեան: Ոչ թէ կուռք էին պաշտում, այլ այդ կրակ քարերի մէջ նրանց տիեզերական իմաստութեան խորհուրդն էին փառաբանում: Իրենց արարչագործ դիցուհի Անահիտն էր մայրը Հայոց Լեռնաշխարհի: Անահիտ, տարան իրեն Պարթեւ ցեղակիցները, իրենց երկրին արարչութիւն պարգեւելու: Տարան իրեն մինչեւ հարաւի հեռու դաշտեր, մայրութեան ոգու հուր ցանելու իրենց ու իրենց երկրին: Աշխարհին լոյս, ջերմութիւն պարգեւող արեգակը Միհր եղաւ, որպէս կեանքի ու ճշմարտութեան աղբիւր, «Արդար» կոչեցին: Հազար, հազար տարիներ յետոյ իրենց լեռների գագաթներից նրա լոյսի բխումը երգեցին: Գնաց հասաւ մինչեւ հեռու հռովմէացիների երկիր, կայսրերով, երկրի բոլոր մարդկանցով նրա ծնունդը տօնեցին: Այո, նա էր կեանքը, ճշմարտութիւնը եւ բնութեան մշտանորոգ «Յարութիւն»ը: Գնացել էր հասել նաեւ շատ հարաւ, մի Վարդապետի հետ աշխարհի մարդկանց սէր, խաղաղութիւն, յարութիւն բերելու: Հայոց հին աստուածները, մարմնաւորելով բնութիւնը, խորհրդանշել են բարին, գեղեցիկը, հերոսականը, սէրը, իմաստութիւնը, հայրենիքը, յարութիւնը, ճշմարտութիւնը, կեանքը...:

Արմէն-Հայ, վեհագոյնը հիւսիսային ժողովուրդների, իր հանճարի փայլատակումներով մարդացրեց բնութեան երեւոյթները, մարդացրեց իր միասնութիւնից ճառագած վսեմը՝ սէր, մայրութիւն, յաղթանակ, հողի պաշտամունք, գեղեցկութիւնը, հիւրընկալութիւն, բանաստեղծութիւն: Բարեպաշտութիւն, մարտնչելու ոգի եղեւ Հայոց Լեռնաշխարհում: Ինչո՞ւ սպաննեցին հայոց աստուածներին: Երկարատեւ կռիւ եղաւ, չհանդուրժեցին, որպէսզի նորը պարտադրէին: Ցեղակից պարսիկ գրահադաշտականներ շարունակում են իրենց նախնիների հաւատքը, շարունակում կատարել «կրակի» պաշտամունքին նուիրուած ծէսերի տօնախմբութիւնները: Որպէս պարսիկ ցեղի նախնիների ազգային աւանդութիւն, նրա բացօթեայ ժողովրդային պաշտամունքին իրենց հետ մասնակցում են նաեւ նոր հաւատքի մարդիկ պարսիկ մահմետականներ: Ազատութեան հովեր են ճախրում հայոց երկրում, Արմէն-Հայեր սկսել են վերադառնալ իրենց նախնիների հաւատքին, Վահագնի ծնունդ, Միհրի Արեւագալ, Աստղիկի Վարդավառ, Հայկի յաղթանակի կռիւ, Ծաղկազարդ են տօնախմբում:

Ես, Քրիստոնեայ հայ եմ, մկրտուած Մուսաների պաշտամունքի լերան լանջի հայոց շէնի տաճարի քարակոփ աւազանիկում: Հազար, հազար տարիներ իմ նախնիների նոր հաւատքի խոհերը որպէս «ծին» կան իմ էութեան մէջ: Սակայն, ենթագիտակցութիւնիցս պոռթկում է նաեւ իմ ապուպապերի բնութեան հրաշափառ արշալոյսի, սիրոյ, գեղեցիկի, ուժի, լոյսի, ծաղկած ծառի, հայրենի հողի պաշտամունքի, արեգակի լոյսին նուիրուած հաւատքի ճշմարտութիւնը, նրանց մարդացած աստուածներին մատուցուած հրաշալի տօնակատարութիւնները, կեանքի ու արարման արբեցման խորհուրդը: Հեթանո՞ս եմ... որպէս Արմէն-Հայի ոգին կրողի յետնորդ՝ հանդուրժում են նաեւ այն: Սքանչանում նրանց փառաբանած՝ լոյսի, կրակի, սիրոյ, գեղեցիկի, բարիի, մայրութեան, ուժի, ծաղկի բնութեան տիեզերական առեղծուածի խորհուրդով, բնութիւնն է կեանքը ու ճշմարտութիւնը, մարդն է նրա արարչութեան հրաշալիքը: Հայոց նախնիների հաւատքը, փառաբանումն էր տիեզերքի ու բնութեան «Խորհուրդ Խորին»ի: Մենք, այս մոլորակի մարդիկ, տիեզերքի միլիոն-միլիոն մոլորակների մարդկանց հետ տիեզերքի առեղծուածն ենք: Մարդն իր իմաստութեամբ, այդ առեղծուածի ճշմարտութեան բացայայտման սեմին է: Սակայն, ես ու հայոց մայր ոստանի բազում հայորդիներ բարբարոս չենք, մեր նախնիները վայրենի չէին, որ հաւատացել են ճշմարիտին, բարիին, գեղեցիկին, վսեմին, ուժին: Իրենք ոչ ոքից չեն աղաչել փրկութիւն, չեն խնդրել բարիք, մանանայ, ո՞վ նրանց ապաստան, հողի արարման իմաստութիւն շնորհեց: Հաւատացել են ուժին, քաջերն իրենց զէնքով ստեղծել են բազում աշխարհակալութիւններ, մղել հարիւր յաղթական ճակատամարտեր, ժառանգ թողել Մեծ ու Փոքր տարածուն Հայքերի հրաշակերտ երկիր: Նրան տիրելու համար խոշոր կայսրութիւնների բանակների կռիւ եղաւ, այնտեղով անցան հարիւր հազարներով հեռու անապատների վաչկատուն մարդիկ, այրեցին իրենց ճանապարհը, փլեցին երկիրը: Ովքեր նախնեաց Հայկ Նահապետի քաջի սիրտ ունէին մնացին իրենց շէներում, ում հոգում

Շար.ը էջ 18

Project:
REGIONAL INTERMODAL TRANSPORTATION CENTER (RITC); PROJECT E10-35
(Federally funded; hence federal guidelines apply)

The Bob Hope Airport Invites All Construction Trade contractors, Vendors and Suppliers to meet with Pre-qualified General Contractors and become familiar with the Proposed $100 Million Regional Intermodal Transportation Center Project

OPEN HOUSE
(non-mandatory)
Meeting Date & Time:
10:00A.M.; March 15, 2011

PRE-BID JOB WALK
(non-mandatory)
Meeting Date & Time:
1:30P.M.; March 21, 2011

Location: (both events)
Bob Hope Airport, Hangar 40,
2910 N. Clybourn, Burbank, CA 91505

Project Type & Description:
New Construction – Intermodal Transportation Center, Consolidated Rental Car Facility
Concrete Parking Structure, Elevated Walkway with Moving Sidewalks

Visit Website:
www.bobhopeairport.com
Hyperlink:
Business Opportunities

Plan Check Set Drawings are Available: Contact
ARC/Ford Graphics
Region 3 Website
http://socal.fordgraphics.com Or
glendale@e-arc.com
818-241-4181
Pasadena@e-arc.com
626-583-1122

# ԹԷՅԻ ՄՈԳՈՒԹԻՒՆԸ
## CAMELLIIA SIINENS-ԹԷՅԵՆԻ

*ՃՈՒԼԻԵԹԱ ՍԱՀԱԿԵԱՆ*

Լատինական անուանումը կապուած է քարոզիչ Իրժի Կամելիուսի անուան հետ: Նա երկար տարիներ ապրել է Չինաստանում: Ենթադրւում է, որ Հնդկաստանի հիւսիսարեւելեան Ասսամ նահանգի խառը անտառներում աճող թէյենին հնագոյնն է աշխարհում: Ծառի բարձրութիւնը հասնում է 10 մ-ի, իսկ բնի տրամագիծը՝ 50-սմ-ի: Հին չինական գրքերից մէկում թէյի դրական յատկութիւնների մասին գրուած է.

«Թէյը դառնահամ է, սակայն, երբ մարդ խմում է այն, սկսում է աւելի լաւ տրամաբանել, վերանում է քնկոտութիւնը, յոգնածութիւնը, պայծառանում տեսողութիւնը»: Չին իմաստասերները համարել են, որ թէյը միջնորդի դեր է կատարում Բուդդայի եւ թէյ խմողի միջեւ, օգնում է մարդուն հասնելու ինքնաճանաչման, բարձրացնում է նրա ոգին, առողջացնում եւ հանգստացնում հոգին եւ հետեւաբար պարգեւում առողջ, երկարակեաց կեանք: Չինացիները մօտ 5000 տարի օրէնքի ուժով պահպանել են թէյի ըմպելիքի պատրաստման գաղտնիքները: Թէյերի բազմատեսակ (աւելի քան 3000) տեսականու սպեկտրում առանձնանում է կիսաֆերմենտացուած փիրուզագոյն կամ ուլուն կոչուող տեսակը, որն արտադրւում է միայն Չինաստանում: Արարողութիւնների ժամանակ օգտագործւում է միայն այս տեսակը. այն կարելի է թրմել բազմաթիւ անգամ: Ուլուն տեսակն առանձնանում է անկրկնելի համով եւ բազմաթիւ բուժիչ յատկութիւններով:

Այն կանխարգելում եւ բուժում է սիրտ-անօթային եւ ուղեղի անօթների հիւանդութիւնները, աթերոսկլերոզը, ունի երիտասարդացնող եւ նիհարեցնող յատկութիւն, լաւացնում է արեան շրջանառութիւնը եւ յիշողութիւնը: Այս տեսակը Չինաստանում բոլորն են խմում: Այն որեւէ հակացուցում չունի:

Եւրոպայում թէյի մասին իմացել են 1517 թուականից, այն որպէս նուէր՝ մատուցուել է Պորտուգալիայի արքային, նրան հպատակ նաւագնացների կողմից:

100 տարի անց թէյը սկսեց ներմուծուել հոլանդական առեւտրական նաւերով: 1664 թուականից թէյն ընդունուեց որպէս արարողական ըմպելիք անգլիական արքունիքի կողմից:

18-րդ դարի սկզբից Լոնտոնում գործում էին թէյի մասնագիտացուած խանութ եւ թէյարան, որից հիմնականում օգտւում էին կանայք: Մինչ այսօր էլ սեւ թէյը Անգլիայում համարւում է գեղեցկութեան խորհրդանիշ: Անգլիական «Five oclock» թէյըմպման պարտադիր պարագաներն են կաթը, շաքարը եւ կիտրոնը:

Կիտրոնի հիւթը 5-10 անգամ աւելացնում է թէյի հակաօքսիդանտ նիւթերի (կատեխիններ) իւրացումը, որոշ չափով օգտակար է նաեւ շաքարը: Սակայն կաթնային սպիտակուցը խոչընդոտում է կատեխինների իւրացմանը, իսկ թէյի մէջ պարունակուող կոֆէինը խանգարում է կաթնային կալցիումի իւրացմանը: Անգլիացիները նախընտրում են Շրի-Լանկայի (Ցեյլոն) թէյերը: Շրի Լանկայում թէյը հիմնական մշակաբոյս է, այն յայտնուել է կղզում 19-րդ դարում: Երկրում առանձնացուած են 7 կլիմայական գօտիներ, որոնցից ստացուած թէյերը տարբերւում են, այդ երկրում արտադրուած թէյի տուփի վրայ պատկերուած է թրով առիւծ:

Ռուսաստանում թէյը տարածում է ստացել 1812թ. Նապոլիոնի արշաւանքից յետոյ: 1818թ. մշակում են Նիկիտինեան այգում, 19-րդ դ. երկրորդ կէսից այն սկսում են մշակել Սեւ ծովի Կովկասեան ափերին:

Թէյը կիտրոնով խմելու «հեղինակային իրաւունքը» պատկանում է ռուսներին: Ռուսաստանում սիրում են թէյը խառնել այլ բոյսերի հետ, այդ երկրում մեծ կիրառում ունեն կարմիր եւ սեւ թէյերը, իսկ վերջին տարիներին նախընտրում են կանաչ թէյը:

Թէյի մշակովի տեսակը մշտադալար թուփ է, մատղաշ տերեւները ծածկուած են արծաթափայլ խաւիկով, դրանք օվալաձեւ են, եզրերը՝ սուր-կտրատուած (սղոցաձեւ): Տերեւները թափւում են գարնանը՝ իրենց տեղը զիջելով նորերին: Ծաղիկները մեծ են, 10 սմ տրամագծով, սպիտակ գոյնի, դեղին կամ վարդագոյն երանգաւորումով, խաւոտ: Բոյսը ծաղկում է Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում է Հոկտեմբեր-Նոյեմբերին: Պտուղը փեղկաւոր տուփիկ է, 5-6 փայլուն կլորաւուն սերմերով: Դրանց տրամագիծը 1 սմ-ից աւելի է: Սերմերից ստանում են իւղ, որն օգտագործւում է օծանելիքի արտադրութեան մէջ:

Սպիտակ, կանաչ, դեղին, կարմիր եւ սեւ թէյերը ստանում են նոյն թփից:

Թէյենու մատղաշ ընձիւղները (փլոշ կամ փլեշ) անընդհատ կտրում են: Որքան քիչ են ընձիւղի վրայի տերեւները, այնքան բարձր է թէյի որակը: Տերեւների քանակը տատանւում է՝ 1-3: Տերեւները փռում են բարակ շերտով, երկար ժամանակ չորացնում պարբերաբար պտտելով եւ ոլորելով դրանք: Այդ ընթացքում դրանց մէջ կատարւում է խմորում (ֆերմենտացիա), որը բերում է բաղադրութեան, հոտի եւ համի փոփոխութեան: Այս պրոցեսի աւարտին տերեւները ստանում են կարմիր գոյն: Այնուհետեւ տերեւները ենթարկւում են ջերմային մշակման՝ ստանալով սեւ գոյն:

Գագաթային մասում գտնուող նուրբ, փայլուն խաւիկով ծածկուած տերեւներից ստանում են առաւել արժէքաւոր թէյի տեսակները:

Կանաչ թէյ ստանալու համար տերեւներն անմիջապէս ենթարկւում են ջերմային վերամշակման: Կանաչ թէյը զիջում է սեւ թէյին բուրմունքով, սակայն դրա մէջ աւելի շատ է օգտակար նիւթերի բաղադրութիւնը: Որակեալ կանաչ թէյի ըմպելիքը կիտրոնի գոյն ունի, ցածրորակը՝ դեղին:

Թէյենու տերեւները, ընձիւղը, բողբոջները հարուստ են օգտակար նիւթերով՝ որոնց քանակը 300-ից աւելի է:

Թէյենին պարունակում է ալկալոիդներ, գլիկոզիդներ, եթերային իւղեր, մեծ քանակութեամբ բիոֆլաւոնոիդներ, ածխաջրեր:

Սպիտակուցների քանակութեամբ ֆերմենտացման չենթարկուած թէյենու տերեւը չի զիջում լոբազգիներին:

Թարմ տերեւներում վիտամին C-ի պարունակութիւնը մի քանի անգամ գերազանցում է ցիտրուսայիններին, իսկ վիտամին P-ն նպաստում է վիտամին C-ի իւրացմանը, ամրացնում արիւնատար անօթների պատերը: Տանինի բարձր պարունակութիւն ունեցող սեւ թէյի տեսակները նոյնպէս հարուստ են P վիտամինով: 3-4 բաժակ թէյը (5-7 գրամ՝ 400 մլ ջուր) լրացնում է օրգանիզմի 1 օրուայ չափաբաժինը: Թէյը հարուստ է նաեւ ենթավիտամին A-ով, վիտամիններ B1, B2, B5, ֆոլիաթթուով, պարունակում է կոֆէին, դաբաղանիւթեր, դառնանիւթ, կալցիում, մագնիում, երկաթ, ֆտոր, կրեմնիում, ֆոսֆոր, մանգան, կալիում: Թէյում պարունակուող վիտամին K-ն նպաստում է պրոտրոմբինի առաջացմանը լեարդում, այս նիւթը կարգաւորում է արեան մակարդելիութիւնը:

Կանաչ թէյից առանձնացուել են թուով 6 հակաօքսիդանտ յատկութիւն ունեցող կատեխիններ, դրանց միացութիւնները եւ բաղադրիչները: Գիտնականներն ապացուցել են, որ կանաչ թէյը կանխարգելում է ազատ ռադիկալների ազդեցութիւնը եւ ծերացման ընթացքը: Կանաչ թէյը պարունակում է մեծ քանակութեամբ ամինաթթուներ:

Յայտնի է, որ նիհարեցնող սննդակարգի անցնելու դէպքում օրգանիզմը յայտնւում է սթրեսային վիճակում: Ցածր կալորիականութիւն ունեցող եւ բազմաթիւ օգտակար նիւթեր պարունակող թէյը շատ օգտակար է նման պարագայում:

Կանաչ թէյը հեռացնում է օրգանիզմից թոյների որոշ տեսակներ, ունի հակաճառագայթային ազդեցութիւն, մաքրում է ոսկորները ստրոնցիումից: Հերոսիմա եւ Նագասակի քաղաքների ողջ մնացած բնակիչներից շատերը գտնում են, որ «պարտական» են այս մոգական բոյսին: Ճապոնիայում աճում է թէյենու «Camellia japonica» տեսակը, որն առանձնանում է իր գեղեցկութեամբ, շատերն աճեցնում են այն իրենց բնակարաններում: Ասում են, որ ճապոնացիները պահպանում են իրենց վայելուչ կազմուածքը եւ մաշկի առողջ վիճակը կանաչ թէյի շնորհիւ: Ուշագրաւ է նաեւ, որ այդ երկրում շատերը փոշիացնում են թէյը եւ հարում մինչեւ փրփրելը, ստացուած լուծոյթով պատրաստում են ըմպելիք, որ խմելուց յետոյ գաւաթի յատակին չի մնում նստուածք:

Իմաստը նրանում է, որ օրգանիզմը իւրացնում է նաեւ ջրում չլուծուող, թէյի տերեւի օգտակար բաղադրիչները: Ճապոնուհիների մէջ աւելի նուազ է գեր, հիպերտոնիայով, երակի վարիկոզ լայնացումով, օստեոպորոզով հիւանդ կանանց թիւը: Համեմատաբար քիչ է տարածուած նաեւ կրծքագեղձի քաղցկեղը: Նշուած արդիւնքին հասնելու համար պէտք է խմել 1 լ ջրում թրմուած 12-13 գրամ թէյ: Կամ 5-7 հատ խտացրած թէյի հաբեր:

Կանաչ թէյի թուրմն օգտակար է շագանակագեղձին, իջեցնում է շաքարի տոկոսը, խոլեստերինի մակարդակը, հակասկլերոտիկ է: Բարենպաստ ազդեցութիւն ունի լեղապարկի, լեարդի, ենթաստամոքսային եւ վահանաձեւ գեղձերի եւ սրտամկանի վրայ: Կանաչ թէյն ունի հակամանրէային ազդեցութիւն: Օգտագործւում է դիզենտերիայի եւ աղիքների լորձաթաղանթի բորբոքման դէպքում: Բուժման նպատակով պատրաստում են 5%-անոց կանաչ թէյի թուրմ՝ եռացրած ջրով, 30 րոպէ անց թուրմը մէկ ժամ եռացնում են ջրային բաղնիքի վրայ, պարբերաբար խառնում: Եփուկը լցւում է մանրէազերծ շշերի մէջ եւ պահւում սառնարանում:

Խմել օրը 2 անգամ, սնունդ ընդունելուց 30 րոպէ առաջ, 1 թէյի գդալից մինչեւ 1 դեսերտային գդալ՝ կախուած երեխայի տարիքից:

Հիւանդութեան սուր ընթացքի դէպքում խմել 10 օր, իսկ քրոնիկ ընթացքի դէպքում՝ 15-20 օր:

- Թարմ պատրաստուած թուրմը պահպանում է արեւայրուքից, օգտագործւում է աչքերի կոպերի բորբոքման, մաշկի բորբոքուած վերքերի բուժման համար, ստամոքսահիւթի ցածր թթուայնութեան դէպքում (օրը 4 անգամ՝ մէկական ճաշի գդալ):

Դեղատոմս հիպերտոնիայի դէպքում, կէս թէյի գդալ կանաչ թէյին աւելացնել կէս բաժակ եռջուր, թրմել 45 րոպէ: Հովանալուց յետոյ աւելացնել 15-20 կաթիլ վաղենակի ոգեթուրմ (վաճառւում է դեղատանը):

Խմել հետեւեալ ձեւով. 1-ին օրը՝ առաւօտեան, 2-րդ օրը՝ առաւօտեան եւ երեկոյեան, 3-րդ օրը՝ առաւօտեան, կէսօրին եւ երեկոյեան, 4-րդ օրը՝ առաւօտեան եւ երեկոյեան, 5-րդ օրը՝ առաւօտեան: Դեղամիջոցը պէտք է խմել սնունդ ընդունելուց 30 րոպէ առաջ:

Ցանկալի է խորհրդակցել բժշկի հետ: Դեղամիջոցն ունի արագ ներգործութիւն:

Սրտխառնոցի դէպքում անհրաժեշտ է ծամել չոր, կանաչ թէյ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



# «ԱՄԷՆ ԱՆԳԱՄ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՅՑԵԼԵԼԻՍ ԼԻՑՔԱՒՈՐՒՈՒՄ ԵՄ»

*Շարունակուածէջ 14-էն*

*ւած, գիրքը կոչւում է՝ «Առանց լիցողութեան պարե՞լ, թէ՞», արդէն շարուած է, հովանաւորի կարիքն ունեմ հրատարակելու համար: Գիրքը եղեռնին է նուիրուած, սակայն ոչ սովորական մօտեցում, այլ՝ բոլորովին տարբեր տեսանկիւնից դիտուած»: Գրող Կիմա Կիրակոսեանը իր անտիպ գրքից կարդաց հատուածներ, նա արժանացաւ ներկաների ծափողջոյններին:*

*Գարուշը ուրախութեամբ ողջունեց Ֆլորա Սարեանի ներկայութիւնը իր նոր գրքով՝ «Գայեանէ» անունով: Նա գնահատելով գործը ասաց. «Ահա Ֆլորա Սարեան անունով գրողը, որ հրատարակել է առաջին գիրքը, վէպ՝ «Գայեանէ» անունով, գիտէինք «Գայեանէ» բալետը, հիմա էլ՝ «Գայեանէ» վէպը խմբագրութեամբ Խորէն Արամունու:*

*Բեմավարը խօսելով բանաստեղծութեան մասին այսպէս մեկնաբանեց՝ «Իսկական բանաստեղծութիւնը պէտք է ասելիք ունենայ եւ բանաստեղծական գիւտերի միջոցով այդ ասելիքը հասուի ընթերցողին»: Ձայնը տրուեց շնորհալի բանաստեղծուհի Ագնես Գէորգեանին: Նա այսպէս սկսեց՝ «Բարի երեկոյ բոլորիդ, շնորհակալ եմ, ես պէտք է ընթերցեմ իմ նոր հատորից, որ անտիպ է դեռ: Բոլորն էլ ներկայ օրերում է գրուած՝ թոհ ու բոհով անցած, ամէն ինչը բոլորիս շատ մտերմիկ: Չգիտեմ ես սահուն բանաստեղծներից եմ, թէ՝ գլուխներից, ոչ նրա համար եմ պայքարում, ոչ էլ սրա համար ցաւում եմ: Բանաստեղծութիւնների մէջ ծնուել եմ, եօթ տարեկանից մինչեւ հիմա շարունակում եմ գրել: Նոր գրքիս մէջ նկատի ունեմ ինքնակենսագրականով ներկայանալ, ահա ընթերցեմ ձեր համար.եօթ քոյր եւ եղբայրներիս մէջ միակ պոետն եմ, որ ինձ շնորհուել է Աստծուց, տպագրուել եմ «Պիոներկանչի» ժամանակներից մինչեւ օրերս, ծիածանուել եմ լոյսով եւ շաղաղուել եմ արցունքով, որից էլ ծնւում են երգերս: Ինձ համար կեանքը սէր է, պոեզիան աղօթք»: Ագնեսը հասկանալի, մեղմ եւ ապրումով կարդաց իր բանաստեղծութիւններից մի փունջ, յիշենք մէկ մասնիկը.*

Իմ օրերը եւ մաճուր են եւ յստակ
Տառապանքի, տանջանքի մէջ
մկրտուած:
Բարձրանում եմ ես աննկատ
ամէն ժամ
Իմ մտքերի, լեռներն ի վեր մոռացուած:
Լոյս է հոգիս սերմնացանի
առատ բուռ
Բաշխում բուռ-բուռ բարութիւնը ամենքին:
Խինդ է շաղում շիտակ ճամփին ամէն օր
Մաքրութիւն ու սէր է տալիս
այս կեանքին:
Ինչ են ուզում չկամները չարասիրտ
Չեմ հեռանայ եւ չեմ դառնայ
տարագիր:
Ինչ որ ունեն մարդիկ շուրջս
հոգով բիրտ
Քեզ չեմ լքի, իմ խիղճն ես իմ
երկիր:

*Ագնեսը ելոյթի աւարտին գնահատուեց բուռն ծափերով:*

*Գարուշը բեմ հրաւիրեց Ջանիբեկ Կոչեցուն եւ ասաց. «Ես տեղեակ չեմ նրա վերջին երեք տարիներից, հիմա կիմանանք ինչպէս է, որպէսզի ես նոր բան ասեմ նրա մասին, ժամանակին ասել եմ, որ դրանք ոչ թէ մանրապատումներ են, այլ՝ ծանրապատումներ»:*

*Ինչպէս ես եմ ճանաչում Ջանիբեկին, նա ժամանակը շատ թանկ է համարում, անդադար գրում է եւ առպակասը տարին մէկ գիրք է հրատարակում, այն էլ հայրենիքում: Նրա ծննդեան ութսուն ամեակը եւ գրքերի շնորհանդէսը մեծ շուքով է կատարուել ՀԳՄ կողմից գրողների միութեան դահլիճում՝ Երեւան, բանախօսներն են եղել՝ Լեւոն Անանեանը եւ Հրաչեայ Մաթէոսեանը: Ամէն անգամ Հայաստան մեկնելով նա իր ծննդավայրի օդ ու ջրով, հայրենակիցների շունչով ու ոգով լիցքաւորուած վերադառնում է Գլենդէլ առանց յապաղումի նոր գրքի խմբագրութեամբ զբաղուելով, մաղթենք մեր ազնիւ եւ համեստ Ջանիբեկին քաջառողջութիւն, որ յանկարծ չլինի թերաւարտ թողնի ջինջ ու զուլալ բխող յոյզերն ու մտածումները:*

*Ամբիոնի մօտ հրաւիրուեց Ջանիբեկը: Նա գարնան զեփիւռի մեղմութեամբ սկսեց իր ելոյթը՝ «Բարեւ ձեզ, շնորհակալութիւն բոլորիցդ, վարչութեան անդամներից, որ առիթ տուիք այստեղ ներկայանամ կարդալու համար իմ գրւածքներից: Ոչ ես եմ անծանօթ եւ ոչ դուք, միմեանց լաւ ճանաչում ենք վաղուց եւ առնչւում մէկս միւսի հետ: Ազնիւ խօսք, ես ամենեւին չեմ փոխուել եւ չեմ փոխւում, մնում եմ նոյն Կոչեցին, ոչ չապիկ եմ փոխում եւ ոչ գոյն, մնում եմ նոյն ամաչկոտ Ջանիբեկը բոլորիդ նկատմամբ սէր ու գուրգանք տածելով»: Այս խօսքից յետոյ Ջանիբեկը կարդաց իր նորապատում ու մանրապատում գրւածքներից մեծապէս գնահատանքի եւ ծափերի արժանանալով:*

*Գարուշը լսելով Ջանիբեկի նոր գրքից որոշ գրութիւնների ընթերցումը այսպէս ակնարկեց. »Այնքան էլ անկեղծ ու ազնիւ չէր, որովհետեւ իր կեանքում կայ տաս տարուայ դաժանակրութիւն եւ եթէ այդ թոնի վրայ բացուէր նրա սպասելիքը երեխաները վզին, խոպանից վերադառնալու յոյսը, ես կը համարէի անկեղծութիւն Ջանիբեկ ես տաս տարին եմ պահանջում եւ խնդրում եմ գրել այդ վէպը, այդ տարիների անց ու դարձը»: Գարուշը բանաստեղծական գիւտերի սիրահար յիշեց Դանիէլ Վարուժանից մէկ բանաստեղծութիւն, որը կարելի է ասել համընկնում է Ջանիբեկի եւ Ֆիմայի քաղցր կեանքը մեկնաբանող գեղեցիկ մի օրինակի հետ՝ «Սիրահարները» վերնագրով. Գարուշը այսպէս հիացումով բացատրեց՝ «Նրանք երկուսն էլ ծեր են, զառամեալ, նստած են զբօսայգում, երկուսն էլ ձեռնափայտով են, եկել են ժամադրավայր, այդ իրենց սիրային ջերմութիւնը այնքան բորբ է, որ ձեռնափայտերն են խաչւում սիրուց առանց մի բառ խօսելու: Բանաստեղծական գիւտ, դա այն Դանիէլ Վարուժանն է, որ ասում է՝ «Կուլամ, կուլամ լացող կատուխ հետ»: Հիմա կարող ենք ասել շնորհակալութիւն Ջանիբեկին»:*

*Ելոյթների աւարտին մտքերի ազատ փոխանակութիւն յայտարարուեց:*

*Խօսքը տրուեց գրող Սահակ Թութչեանին. «Այսօր տարբեր ժանրի գրողներ ելոյթ ունեցան, հասարակաց գիծ մը կար, չորսն ալ անուղղայ եւ անընդհատ սիրահարներ էին եւ ատոր համար կը շնորհաւորեմ զիրենք, որովհետեւ չկայ թեմա, որ սիրոյ նման մշտական եւ յաւերժական չըլլայ: Անշուշտ նրանք տաղանդի եւ արուեստի տեսակէտից տարբեր-տարբեր մակարդակներու վրայ էին: Ես այստեղ մանաւանդ պիտի առանձնացնեմ Ագնեսի խօսքը, որուն բանաստեղծական խօսքը ճշմարիտ խօսք էր, կը շնորհաւորեմ զինքը, իսկապէս տաղանդաւոր է ըստ իս եւ գիտէ բանաստեղծական բառերի արժէքը, քերականական փոքր շեղումներ ներելի են, կարելի է աչք գոցել: Ամենէն կարեւորը իսկական ճշմարիտ լիրիկական բանաստեղծական խօսքն է, որուն համար կը շնորհաւորեմ Ագնեսը»:*

*Բանաստեղծ Գէորգ Քրիստինեանը ցանկութիւն յայտնեց իր խօսքն ասելու երեկոյի մասին. «Ի հարկէ շատ քիչ ժամանակ մնաց մեզ քննարկելու եւ ասելու մեր խօսքը, որովհետեւ սիրելի Գարուշը փոխանակ ներկայացնելու հեղինակներին, նրանց մասին կարծիքներ էր յայտնում: Ես կարդացի թերթում Ագնեսի մասին գրուած խօսքը չափազանցուած բան չկայ, գրողը ճիշտ է բնութագրել: Բազմաթիւ բանաստեղծական չքեղ պատկերներ կան իսկապէս, իսկական բանաստեղծական է: Վերցրէք 20-րդ դարի մեր բոլոր բանաստեղծներին չի զիջում Ագնեսը նրանց: Միւս ելոյթ ունեցողներն եւս յանձինս՝ Ալագեազ, Կիմա Կիրակոսեան եւ Ջանիբեկ, բոլորն էլ շատ լաւ էին եւ հետաքրքրական»:*

*Բանաստեղծ Գրիշ Դաւթեանը փոխադարձ կարծիքների արտայայտութեամբ թէժացած մթնոլորտը յորդորներով մեղմելուց յետոյ գնահատական խօսքերով արժեւորեց ելոյթ ունեցողներին ասելով. » Ալագեազն իր հասուն տարիքի փորձառութեամբ բիւրեղացած զգացումների արտայայտութիւնները լաւ էր ներառել իր բանաստեղծութիւնների մէջ, շատ լաւ էին եւ գովելի: Շատ լաւ էին Ջանիբեկինը, որը մինչեւ վերջերս այդ իր հրատարակող գրքերը, որ սիրով եմ կարդում, տեղ-տեղ իրեն կրկնում էր եւ մտքով եւ գեղարուեստական պատկերներով: Այս կարդացած մի քանիսի մէջ կրկնութիւն չնկատեցի, նրանց մէջ գեղարուեստական պատկերների նորութիւն եւ թարմութիւն կար: Կիմայի թեման ինձ շատ հետաքրքրեց, որովհետեւ դա թուրքերի մասին է, որոնք իրար հետ վիճում են, հայոց ցեղասպանութիւնը ընդունեն, թէ չընդունեն: Միայն իմ առաջարկն է, որ եղեռն բառի փոխարէն ցեղասպանութիւն բառը գործածուի՝ համազօր ջենոսայդին միջազգային իրաւունքի տեսակէտից: Ագնեսի մասին արդէն շատ խօսուեց, ես իր նախկին գրքերն կարդացել եմ, հաւանում եմ նրա գրականութիւնը»:*

*Առիթ տրուեց Կիմա Կիրակոսեանին իր խօսքն ասելու. »Ագնեսի բանաստեղծութիւնների կապակցութեամբ իմ անկեղծ կարծիքն այն է, որ նրա այսօրուայ ընթերցանութիւնների մէջ կային շատ գեղեցիկ գրական պատկերներ, սակայն ինձ չյուզեցին, ոչ մի բանաստեղծութիւնը ինձ չյուզեց, չեմ իմանում ինչո՞ւ. սակայն պր. Ալագեազինը այսօր երբ նա կարդում էր, ես յուզուեցի. սա է տարբերութիւնը, սա իմ անկեղծ կարծիքն է, որ ասում եմ, այդ բոլոր սիրուն պատկերները լսելով իմ սիրտը չթրթռաց, սա է խնդիրը»:*

*Ըստ ցանկութեան բեմ բարձրացաւ Երուանդ Իսկանդարեանը, նա ուրախութեամբ ողջունեց բոլորին եւ հաստատեց այն միտքը, թէ թերութիւններ բոլորի մօտ լինում են, միայն Աստուած անթերի եւ անարատ է: Ինչ վերաբերում էր երեկոյին, նա ասաց. «Այն ինչ որ ես զգացի պր. Ալագեազի բանաստեղծութիւններից, նա մեզ ներկայացրեց արեւմտահայ գեղեցիկ բանաստեղծութիւններ: Տիկ. Ագնեսի գրականութեան մէջ կան հոյակապ պատկերներ, ինչպէս օրինակ՝ «Մութը թագակիր» անարժան իշխանաւորներին է ակնարկում պատուհաս իրենց երկրների ժողովուրդների համար»: Մի այլ արտայայտութեամբ պր. Երուանդը հպարտանքով յիշեց Յովհաննէս Թումանեանին եւ Ղազարոս Աղայեանին որպէս գագաթներ ոչ սղուած գրողներ: Նա գովեց Կիմա Կիրակոսեանին ասելով. «Ձեր աշխատանքները շատ հոյակապ են, այո, թուրքին պէտք է ասել, որ մարդ լինի, որպէսզի մեզ նմաններին չյօշոտի, եթէ դուք դատում էք թրքավարի, այրեցէք բոլոր գրքերը աշխարհի: Նրանք սերել են գորշ գայլերից եւ որեւէ բարոյականութիւն չեն ճանաչում: Ուրախ եմ, հպարտ եմ, հաճելի է, Ջանիբեկը մէկ է, որովհետեւ աշխարհով մէկ է»:*

*Ձայնի իրաւունք տրուեց տիկ. Վրէժուհի Յարութիւնեանին, նա պատրաստուած եկել էր բողոքելու, թէ գրողների միութիւնը որեւէ աշխատանք չի տանում Հայաստանի իշխանութեան դէմ օտարլեզուեան դպրոցների թոյլտուութեան կապակցութեամբ: Ահա նրա խօսքը՝ «Մենք մտաւորական ենք, բայց մտաւորականի ձեւով չենք ապրում: Մտաւորականը առաջին հերթին պէտք է իր երկրի քաղաքացին լինի, որ ցաւօք այդպէս չէ: Հայ գրողներ էք, մտածել էք, որ հաւաքուենք մի նամակ պատրաստենք, ստորագրենք, որպէս հայ մտաւորականներ եւ մեր բողոքը ներկայացնենք Հայաստանի կառավարութեանը: Այսօր մենք 47 թւի ծնուածներս հայերէն ենք գրում, մեզանից յետոյ մեր հայրենիքում հայերէն չեն գրելու եւ չեն խօսելու: Հայրենիքում օտարլեզուեան դպրոցներ են բացւում էլիտարի համար, ա՞յ դրա մասին մտածենք, թէ չէ Ագնեսի մի տողը, միւսի մի հատուածը մեծ վտանգ չի ներկայացնում, մեզ վտանգ է սպառնում հայոց լեզուի կործանումը»:*

*Վերջին արտայայտուողն եղաւ Ռ. Կորիւնը, նա հակիրճ բառերով գնահատեց բոլոր ելոյթ ունեցողներին շնորհակալութեամբ աւարտելով խօսքը:*

*Հետաքրքիր եւ բովանդակալից երեկոյ էր:*

*Ներկաները խոր տպաւորութեամբ թողեցին սրահը:*

** Ասոյթը Ջանիբեկինն է*

# ԱՐՄԷՆ-ՀԱՅԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՀԱՒԱՏՔ

*Շարունակուածէջ 16-էն*

*մարել էր հողի շունչը, նրա անուշ բոյրը, փախան այնտեղից եւ դեռ փախնում են: Գնացին հեռու աշխարհներ, նորէն իրենց արարման իմաստութիւնը եղեւ ու դեռ կը լինի այնտեղ: Հայոց Լեռնաշխարհից մնաց մի «ափ» հող, կեղեքւող մի «փշուր» ժողովուրդ, ինչո՞ւ այդպէս եղեւ, ափսոս քեզ արարչութեան երկիր, արարչագործ Արմէն-Հայ...: Կեղեքե՜լ, յափշտակե՜լ ազգակից մարդու աշխատանքը, նրան նոյնը չե՞ն, ինչպէս թուրք, պարսիկ, ռուս կեղեքիչները, ամօթ, այդպէս ինչպէ՜ս է լինում...:*

*(Շարունակելի)*

# ՄԱՀԱԶԴ



*ԱՐԱՄ ՄԱԹՈՍԵԱՆ*
**(1924-2011)**

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին ԱՐԱՄ ՄԱԹՈՍԵԱՆի մահը որ տեղի ունեցաւ Մարտ 3, 2011ին:*

*Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Զորեքշաբթի, Մարտ 9, 2011ին, ժամը 10:30ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ՝ 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA:*

*Սգակիրներ՝*

*Զաւակները՝*

*Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Մարինա Մաթոսեան եւ զաւակները, Սարօ, Կարէն եւ Արմէն*

*Տօքթ. եւ Տիկ. Գուրգէն եւ Սեդա Մաթոսեան եւ զաւակները՝ Դալար եւ Արամ*

*Տօքթ. եւ Տիկ. Հմայեակ եւ Յոլին Մաթոսեան եւ զաւակները Արման եւ Ատրինէ*

*Տիկ. Պերճուհի Մաթոսեան եւ զաւակները՝ Ներսէս, Արփի եւ Վազգէն Մաթոսեաններ:*

*Տիկ. Մարի Մաթոսեան եւ զաւակները՝ Վարուժան եւ Թորոս Մաթոսեաններ:*

*Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Մայրանուշ Սողոմոնեան եւ զաւակները*

*Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան եւ զաւակները*

*Տ. Տաթեւ Աւ. Քհնյ. եւ երէցկին Արաքի Թաթուլեան եւ զաւակները*

*Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Մակի Գօփուշեան եւ զաւակները*

*Տիկ. Գարմէն Գօփուշեան եւ զաւակները*

*եւ համայն Մաթոսեան, Գօփուշեան, Սողոմոնեան, Խպոյեան, Թաթուլեան ընտանիքները:*

*Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝*
*St. Gregory Armenian Apostolic Church*
*2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107*

# ՄԵՍՐՈՊ Ա. ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱՐՈՅԵԱՆ

*Շարունակուած էջ 13–էն*

*ԹՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ*

*Նոր հանրապետութեան հռչակումով պետութեան աչքին թրքաբնակ փոքրամասնութեանց հոգեւոր պետերը կը դադրէին պետութենէն ռոճիկ եւ մեծարանք ստանալէ: Անոնք անկարեւոր անձինք կը նկատուէին, նոյնիսկ անբաղձալի, որոնց խօսքը ո՛չ կշիռ ունէր եւ ո՛չ արժէք: Մեսրոպ Պատրիարք, գիտակից այս բոլորին, մնաց անշշուկ իր զուտ եկեղեցական ծիսակատարական սահմանին մէջ, պայծառ պահելով Իսթանպուլի 30-է աւելի եկեղեցիները, անոնց կից դպրոցներն ու դպրաց դասերն ու Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը որոնցմէ դուրս գրեթէ մշակութային ո՛չ մէկ ականառու գործ կրցաւ կատարել:*

*Բարեբախտութիւն մը եթէ կար այն ալ Ազգային Սահմանադրութեան տակաւին ի զօրու ըլլալն էր, սահմանափակ չափով, որուն շնորհիւ տնօրինուած վարչական մարմինները գէշ աղէկ կը գործէին ու զօրավիգ կ'ըլլային Պատրիարքին, հակառակ անոր որ զանազան պատճառներով եւ պատրուակներով այդ մարմինները հետզհետէ կը լուծուէին եւ նոյնիսկ ազգային վարչութիւնը եւս համաշխարհային Բ պատերազմի հետեւանքով անգործութեան կը մատնուէր:*

*Մեսրոպ Պատրիարք լուռ կը մնար եւ սակայն մտահոգ երբ տագնապներ կը յարուցուէին փոքրամասնութեանց դէմ մէկը միւսին ետեւէն: «Քսան Դասակարգ» կոչուած պարտադիր զինուորագրութիւնը եւ «Ունեւորութեան Տուրք»ի հարկադրանքը կը ջլատէին նաեւ հայերու բնականոն եւ նուազագոյն պայմաններով բնակութիւնը հանրապետութենէն ներս: Պատրիարքը միշտ ունեցաւ հայերու սէրն ու վստահութիւնը որոնցմով ան դիմաւորեց պատահարները, չհեռացաւ Աթոռէն, անաղարտ պահեց իրեն յանձնուած աւանդը ու անոր հետ կապուած յետնեալ իրաւունքները:*

*Մեսրոպ Պատրիարքի հեղինակած «Նշխարներ» հատորին մէջ, (1948 թ. յետ մահու հրատարակութիւն), ուր ամփոփուած են իր »Հարմակ« ծածկանունով բարոյագիտական եւ կրօնագիտական շարք մը յօդուածները, ըսուած է թէ «Պատրիարքը պարզ քաղաքացիի մը իրաւունքները միայն ունէր յաչս երկրի օրէնքին», զոր ինք նուաստութիւն չնկատեց, այլ ընդունեց որպէս զոհաբերութեան սեղան, ուրկէ իր դիւրազգած, համեստ եւ բարեմոյն անձը հոգեկան արիութեամբ հսկեց պատրիարքութեան անունին եւ դիրքին վրայ:*

*ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ*

*Մեսրոպ Պատրիարքի օրով վերաշինուեցաւ Ֆերիգիւղի Ս. Վարդա-նանց եկեղեցին, հակառակ պետական սեղմումներուն որոնց շարքին, 1935-ին, պետութիւնը հրապարակեց «վազըֆներու օրէնքը» կալուածներու վերաբերեալ, որուն ուժով համայնքային հաստատութիւններու մատա-կարարութիւնը կ'ենթարկուէր «էվգաֆի» վարչութեան հակակշռին: Յաջորդող տասնամեակներուն պատրիարքութեան դիմագիծը մնաց նոյնը, առանց դոյզն չափով վերատիրանալու առանձնաշնորհներու եւ կամ թոյլատու վերաբերմունքի՝ յատկապէս Մուսթաֆա Քեմալի յաջորդ Իսմէթ Ինէօնիւի օրով:*

*Մեսրոպ Պատրիարքին դաստիարակչական եւ գրական վաստակը մնայուն եղած է: Արմաշի Դպրեվանքին յատուկ 1914 թուի Յուշամատեանին մէջ «Հայ Եկեղեցին եւ իր Պաշտօնէութիւնը» ուշագրաւ յօդուածով ան կը հաստատէր թէ «Եկեղեցին գերազանց նշանակութիւն մը ունեցած է մեր պատմական քաղաքակրթութեան համար», մասնաւորելով որ «հայ ժողովուրդը քրիստոնէական դաստիարակութեամբ նոր ձուլում եւ կազմաւորութիւն ստացաւ, աւելի բարձր նպատակի մը պատրաստուելով, հակառակ իր դարաւոր տանջանքներուն, որոնց փոխարէն մարտիրոսի յատուկ լոյսի ճաճանչներով պսակեց իր ճակատը»: Եկեղեցին կղզիացած եւ անհաղորդ մարմին մը չէ եղած մեր կեանքին մէջ իր պաշտօնէութեան ոչ այլամերժ դիրքով, կ'ըսէր, այլ ժողովրդական նկարագրով, երբ եկեղեցւոյ գործունէութեան մէջ կազմակերպչական շարժումներու մասնակից դարձած է աշխարհիկ տարրը:*

*Նարոյեան Պատրիարք կը յայտնէր սակայն այդ օրերուն ա՛յն մտահոգութիւնը որ մե՛րն է նոյնիսկ ներկայ դարուս, երբ կը մտահոգուէր թէ «Հայ Եկեղեցին արդեօք այժմ կը գտնուի՞ իր բարձրութեան վրայ, հաւատարի՞մ է իր կոչման, եւ ընկերային դեր մը կը կատարէ՞ կեանքի բարձրացման եւ նկարագրի ազնուացման տեսակէտով»: Իր համոզումով մեր եկեղեցին թէեւ իր հնութեամբը պատկառելի է եւ վեհաշուք, պէտք չէ որ վաղնջական քարացած հաստատութիւն մը ըլլայ, զուրկ կեանքէ, հրապոյրէ եւ զօրութենէ:*

*Նարոյեան Պատրիարք զարկ տուաւ եկեղեցիներու նոր երգչախումբերու կազմութեան որոնց շնորհիւ եկեղեցական եւ հոգեւոր դաշտը նախկինին թափով փայլեցաւ: Հետեւեալ 12 նոր երգչախումբերը կազմուեցան իր քաջալերութեամբ: Թագսիմի Լուսաւորիչը (1929), Պաքըրգիւղի Քառասուն Մանկանցը (1930), Գումգաբուի Վառվարեանը (1932), Պեշիկթաշի Նարեկացին (1932), Կետիկփաշայի Ջուարթնոցը (1936), Եշիլգիւղի Սահակ-Մեսրոպը (1936), Սամաթիոյ Սահակեանը (1938), Գատըգիւղի Ս. Թագաւորը (1938), Օրթագիւղի Ս. Թարգմանչացը (1940), Իւսկիւտարի Միացեալը (1941), Պալաթի Դուրեանը (1943), Պիւյիւքտէրէի Հռիփսիմեանցը (1944):*

*ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՎԱԽՃԱՆԸ*

*Յանկարծական մահուամբ Մեսրոպ Պատրիարք Նարոյեան կը վախճանէր 1944 թուի Մայիսի 31-ին, 69 տարիքին, գահակալելով 17 դժուար տարիներ: Յուղարկաւորութիւնը կատարուած է Մայր Եկեղեցւոյ մէջ նախագահութեամբ Գէորգ Արքեպս. Արսլանեանի եւ մասնակցութեամբ 25 քահանայ հայրերու, ի ներկայութեան Յունաց Տիեզերական Պատրիարքին, Օրթոտոքս էքզարքներու եւ Ասորի հոգեւորականներու որոնք բաժին առած են իրենց լեզուներով Աւետարանական ընթերցումներ կատարելով: Դամբանականը խօսած է Գէորգ Արքեպիսկոպոս որ նոյն շաբթուն պատրիարքական տեղապահ ընտրուած է պատրիարքարանի խառն ժողովէն: Վախճանեալ Պատրիարքին մարմինը ամփոփուած է Շիշլիի գերեզմանատան պատրիարքներու յատուկ բաժնին մէջ: Դամբարանին վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.*

«Աստ հանգչի Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Նարոյեան

Արժանընտիր Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Նախկին վանահայր Դպրեվանքին Արմաշու

Պերճաբան քարոզիչ, գրագէտ ուսուցիչ

Հովիւ բարի, ժողորդանուէր սիրելի

Ծնեալ Մուշ 1875, վխճ. Իսթանպուլ 1944»

*Վեց տարիներ Պոլսոյ Պատրիարքական Աթոռը թափուր պիտի մնար մինչեւ իր Դպրեվանքի օծակիցներէն Գարեգին Արքեպս. Խաչատուրեանի Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրութիւնը 1950 թուին, որովհետեւ ներքին պայքարներ չփոթի մատնեցին ընտրապայքարը մինչեւ Տ.Տ. Գէորգ Զ Զորէքճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջամտութիւնը, երբ Հայրապետը խնդրեց Կիլիկիոյ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Կաթողիկոսէն անձամբ քննելու հարցը՝ իր մօտ Անթիլիաս կանչելով Պատրիարքութեան պատասխանատուները: Գարեգին Հայրապետի տեղեկագրին վրայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տուաւ հայրապետական վերջնական որոշումը:*

*Այսօր եւս պատմութիւնը կը կրկնուի եւ ներկայ Պատրիարք Տ. Մեսրոպ Բ Մութաֆեան Սրբազան Հօր աննախադէպ եւ ցաւալի հիւանդութեան հետեւանքով Աթոռակից Պատրիարքի ընտրութեան հարցը ներքին դժուարութեանց եւ անհամաձայնութեանց հետեւանքով բարդոյթի վերածուած է, հրաւիրելով պետական անհարկի միջամտութիւն : Ներկայիս, որքան ատեն որ Պատրիարքը ի կեանս է, Պատրիարքութեան գործերը յանձնուած են Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդի: Մեր ջերմ մաղթանքն է որ Աթոռը գտնէ իր անդորրը եւ իր արժանաւոր Պատրիարքը:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԻԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-էն 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

# NOW OPEN SUNDAYS!

## MISSION
WINE & SPIRITS

**GLENDALE STORE ONLY!**

### ԱՋՔԸ ԼՈՅՍ՝ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԽՄԻՉՔ ՍՊԱՌՈՂՆԵՐՈՒՆ

**Mission Liquor** խմիչքի հաստատութիւնը որ փակ կը մնար Կիրակի օրերը, յետ այսու եւ միայն ԻՐ ԿԼԵՆՏԷՅԼԻ մասնաճիւղը պիտի բանայ ամէն Կիրակի, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 4-ը, սկսեալ՝ Կիրակի Մարտ 6-էն:

Կլենտէյլի հասցէն է՝

**GLENDALE**
825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 ● Mon-Sat. 9AM-8PM ● Sunday 10AM - 4PM

**PASADENA**
1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 ● Mon-Sat. 9AM - 8PM

**SHERMAN OAKS**
13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 ● Mon-Sat. 9AM - 8PM